

Հայկական գիտակիեռազգային համալսարան  
Armenian Research & Academic Repository



Այս աշխատանքը պրեսերվացիա «Մեծահայտնային ճամանակներ»  
ոչ առևտության գրանցագործության 3.0 պրեմիումը

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial-  
ShareAlike 3.0 Unported License.

Դա կարող է լինել:


Կոմունիկատուածանության առաջնային միջազգային ստանդարտների  
համարակալի համարակալի ուղարկություն առաջնային միջազգային ստանդարտների

You are free to:

Համարակալի համարակալի ուղարկություն առաջնային միջազգային ստանդարտների


Համարակալի համարակալի ուղարկություն առաջնային միջազգային ստանդարտների

ՏՐԹ. Ա. Յ. ՃԵՂԵՃԵԱՆ



# ՄԵՌՆ ՈՒ ՍԵՐԸ

ՏՀՈՑ ՀԱՄԱՐ



ՏՊԱԳՐ. «ԱՐԱՔՍ» Բ. Յ. ԹՕՓԱԼԵԱՆ

25, Մալիպէ — Հալէպ

1926.

~~A II~~ ~~Stayed here~~  
~~362941 1622 a atps~~

~~1p 504.~~

—	—	—	—
—	—	—	—

613.88 ✓

ԳԵՂԱՄ ՏԵՐ ՄԻՔԱՅԵԼԻՆ

# ՍԵՐՈՎ ՈՒ ՍԵՐԲ

♦ ՏՆՈՑ ՀԱՄԱՐ ♦



ԴՐԵ Տ. ՏԻԹ. Ա. Յ. ՃԵՂԱՅԵԼԻՆ

1926

ՏՊԱԳՐ. «ԱՐԱԳՈ» - Բ. Յ. ԹՕՓԱԼԵԱՆ  
ՀԱԼԵԴ



A 36294

N<sup>o</sup>- 6

ՏՊԱՐԱՆ «ԱՐԱՔՍ» - Բ. Յ. ԹՕՓԱԼԵԱՆ

Հալիպ, Սայիդի թիւ 25



ՀՀԳՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ





ՏՕՔԹ. Ա. Յ. ՃԵՊԵՃԵԱՆ



## ՅԱՌԱԶԱԲԱՆ

Իրողութիւն մըն է որ համաշխարհային պատերազմը բոլոր ազգերու բարոյական մակարդակը նըւաստացուցած է: Այս բարոյական անկումը՝ ծանօթպատճառներու բերմամբ մեր ազգին համար աւելի մեծ եղած է: Այս վերջին տարիներու ընթացքին իբրև բժիշկ թէ՛ մեր դպրոցական տղոց հետ եւ թէ մեր պատանեաց հետ մօտէն շիման մէջ գտնուելով, տեսած ենք որ, պատերազմի առթիւ մեր մէջ մուտքած բարոյական ապականութեանց հետ սեռային զգացումներու չարաչար գործածումը, այսինքն զինութիւնը մեր նոր սերունդին մէջ կարծուածէն շատ աւելի ընդհանրացած աղէտ մը դարձած է, ուստի այս մասին թէ մեր պատանեաց եւ թէ ծնողաց պըզտիկ ծառայութիւն մը մատուցած ըլլալու յոյսով ծեռնարկեցինք զբել սոյն զբքոյկը, որու մէջ առաջին անգամ բոյսերու եւ կենդանիներու անմեղ սեռային յարաբերութիւնները նկարագրելով աշխատեցանք սեռային զգացումներու բնականոն երեւոյթները տեղեկացնել:

Բաց ի ասոնցմէ ուզեցինք ծանօթացնել անոնց չարաչար գործածումներու ցաւալի հետեւ անքներն ու անոնց դարմանները:

ՏՕՔԹ. Ա. Յ. ՃԵՊԵՏԵԱՆ

Հալէպ, 20 Նոյ. 1925






# ՇՅԹԵՇԽԵՐԵՎԱՆԻ ՎԵՐԱՎՈՐՈՒՅ

## ՍԵՐԱ ու ՍԵՐՈ

ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

### ԷԳՆ ՈՒ ԱՐՈՒՆ



Ս Ե Ր Ե Լ Ի Մ տղաս , դուն շատ լաւ գիտես որ ,  
մարդկային առաջին ընտանիքը էզ և արուէ մը կը բաղ-  
կանար . Նոյնպէս գիտես որ ոչ թէ մարդկային ցեղը այլ  
բոլոր կենդանիներ երկսեռ են : Նոյ Նահապետը իր տա-  
պանին մէջ արու և էզ ըլլալու պայմանով ամէն տե-  
սակ կենդանիներէ եօթը զոյգեր առնելու հրամայուե-  
ցաւ : Զեր ընտանիքին մէջ , մայրիկդ ու քոյրերդ իգա-  
կան սեռի , խոկ հայրիկդ , եղբայրներդ ու դուն արա-  
կան սեռի նմուշներն էք : Բայց հիմա պէտք է սորվիս  
որ ոչ թէ միայն մարդիկ ու բարձրագոյն կենդանիներ  
էզ և արու են , այլ ամենաստորին սողուններն անգամ  
էզ և արու են . պէտք է նաև գիտնաս որ բոլոր բոյ-  
սերը՝ վիթխարի ծառեր ու փոքրիկ թուփեր , գոյնզգոյն  
ծաղիկներ ու բազմատեսակ խոտեր , մինչև անգամ բիւր  
դարերու ժայռերը մոխրագոյն հագցնող յետին մամու-  
ռը էզ և արու մասեր ունի : Պէտք չէ զարմանաս եթէ  
ըսեմ որ , մինչև անգամ ախտածին մակարոյծներէ ոմանք  
էզ և արուի տարբերութիւնը ունին :

Կան կարգ մը կենդանիներ , որոնք չէզոք են ,  
այսինքն ոչ էզ են և ոչ արու և նոր սերունդ չեն կը բ-  
նար ծնանիլ . զորօրինակ մը չիւններու և մեղուներու

գործաւոր դասակարգը չէզոք են . բայց և այնպէս ասո՞նք ալ իրենց կարգին ունին թաղուհիներ որոնք լոկ ծնընդարերութեան կը ծառայեն և ամէն անգամին հարիւրաւորներ ծնանելով իրենց սերնդեան ապագայ գոյութիւնը կ'ապահովեն :

Այս կարգագրութեան մէջ , Նախախնամութեան միակ նպատակը՝ ծննդաբերութեամբ սերունդներու ապագայ գոյութիւնը ապահովելու մէջ կը կայանայ : Առանց էգ և արուներու և անոնց սեռային յարաբերութեան այս աշխարհի վրայ չիկայ կեանք , չիկայ գոյութիւն : Կեանքը՝ իր մէջ ունեցած հրապոյրն ու հըմայքը , մեծապէս այս կարեսոր եղելութեան կը պարտի . բնութեան մէջ գոյութիւն ունեցող ահագին եռուզեռը ու մարդկային գործառնութեանց անընդհատ թաւալումը այս սեռային տարբերութեամբ կարելի եղած է . էզն ու արուն բնութեան կառքին լծուած գոյգ նժոյգներ են որ միշտ կ'ընթանան արագ ու կը տանին ամէն ինչ դէպի յառաջ :

—————

## ՍԵՐԱՅԻՆ ԶԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Դուն թերես տասներկու , տասնըչորս կամ տասնըութ գարուններ հազիւ բոլորած ես , քու պղտիկ սըրտիդ մէջ սիրոյ զդացումները դեռ նոր արթնցած կամ արթնալու վրայ են , այս առթիւ իրրե մտերիմ բարեկամ մը կ'ուզենք քեզի մօտենալ և շատ անգամ գաղտնի պահուած այս սեռային յարաբերութեանց մասին , քեզի որոշ բաներ ըսել : Այս բաներու վըրա-

յով գուցէ քիչ շատ գիտես, ու գուցէ կեանքիդ մէջ առաջին անգամ ըլլալով կը լսես։ Այս խնդրոյն վըրայով սորվիլ ու ծանօթանալ քեզի համար շատ անհրաժեշտ պէտք մըն է։ Քանզի այս մասին տգէտ մնալդ քեզ մոլութեանց ու աղէտներու կընայ ենթարկել։

Այս գրքոյկը քեզի տուողը, քեզ սիրող ծնողք մը կամ բարեկամ մըն է, որ համարձակութիւն չունի այս բաներու մասին քեզի խօսելու ու այս միջոցաւ կ'ուզէ քեզ ծանօթացնել ու նոյն ժամանակ զգուշացընել։ Ռւստի կարելի եզածին չափ հասկնալի կերպով մը այս խնդիրը քու առջեղ պարզելու ու միտքդ լուսաբանելու պիտի աշխատինք։ Վստահ ըլլալու ես որ կը խօսի մէկը՝ որ քեզի հետ մօտէն կը հետաքրքրուի ու կը կարեկցի, կը խօսի մէկը՝ որ այս փորձառութեանց մէջէն անցած է։ արդեօք պիտի ուզէլ<sup>՞Ծ</sup> անոր խրատականներէն օգտուիլ։ Եթէ դուն կը փափաքիս որ այս բոլոր փորձառութեանց մէջէն անձամբ անցնիս ու ամէն բան սորվիս, աւազ, ասոր համար կեանքը շատ թանկագին ու շատ կարճ է։ Քեզի համար շատ օգտակար սկզբունք մը պիտի ըլլար, եթէ աշխարհիս մէջ ոչ թէ այս՝ այլ ամէն տեսակ փորձառութեանց մէջ ուրիշներէն օգտուիլը սորվէիր։

Կեանքի այնպիսի մի ժամանակամիջոցին հասած ես որ քու վերջնական նկարագիրդ արագ արագ կազմուելու վրայ է։ մեր նիւթը՝ այսինքն սեռային յարաբերութիւնները, քու նկարագրիդ բարի կամ յոռի ըլլալուն վրայ այնչափ մեծ ազդեցութիւն մը պիտի բանեցնեն, որ սկիզբէն այս մասին ճշգրիտ տեղեկութիւններ ու շիտակ ուղղութիւն մը առնելդ, քեզի համար շատ կենսական հարց մըն է։

Ահաւասիկ այս գրքոյկով մեր միակ նպատակը՝

այս խնդրոյն շուրջ քեզի պէտք եղած ծանօթութիւնները տալով հանդերձ քեզ սպառնացող վտանգներէ զգուշացնել պիտի ըլլայ: Քու սրտիդ մէջ արթնցած սիրոյ այս նոր զգացումը եթէ շխտակ ուղղութեամբ մը առաջնորդուի, քու նկարագիրդ ու քու կհանքդ՝ երթալով աւելի ազնուացող ու աւելի վսեմացող վերելք մը պիտի ըլլայ. իսկ հակառակ պարագային՝ նա գեհենական ոյժ մը պիտի դառնայ ու քեզ պիտի քարշէ, դէպի նուաստացում ու դէպի անբարոյականութեան անդունդը:

Շատ զարմանալի իրողութիւն մ'է որ, սեռային զգացումներու զարթնումը՝ բնութեան կողմէ դրուած է այնպիսի ժամանակամիջոցի մը, երբ դուն անոնց մասին բոլորովին անփորձ ու անտեղեակ ես: Բայց ինչ որ ալ ըլլայ, եղելութիւնը այս է և հետեանքները անխուսափելի են. հետեարար կը կարօտիս մէկու մը որ քեզ առաջնորդէ ու ծանօթացնէ. ուստի շատ կը սիրենք յուսալ որ այս մեր տողերը, այս մասին քեզի ուղեցոյցի պաշտօնը վարէին:

Դանուած են շատ մը պատանիներ, որոնք տըգիտութեան պատճառաւ իրենց մէջ արթնցած այս զգացումները, մեղք մը կամ յոռի բան մը կարծած են և այս սխալ կարծիքին առջև երկայն ժամանակ տանջըռուած ու վարանած են: Հին ժամանակները մինչև անդամ չափահաս մարդիկ՝ այսպէս կարծեցին և այս մեղքէն ազատելու համար լեռները ելան և քարայրներու մէջ առանձնանալով՝ ճգնաւորութիւններ հաստատեցին. այս հոսանքը դարեր տեսեց և քրիստոնէութիւնը շատ տուժեց: Հոս առաջին պատեհութեամբ, որոշ կերպով կ'ուզենք քեզի ըսել որ, այս զգացումը ինքնին սխալ բան մը կամ մեղք մը չէ բնաւ. նա զուտ բնական ու

անմեղ զգացում մըն է, անոր չարաչար գործածումն է  
որ սխալ ու յոռի է։ Այս զգացումը ազագայ սերունդ-  
ներու գոյութիւնը ապահովելու համար Նախախնամու-  
թեան բանական ու բնական մի կարգադրութիւնն է։

---

## ՍԵՐԱՑԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷԶ

— ♦ —

Տղա՛ս, որպէսզի այս ըստած բաներուս լաւ հա-  
մոզուիս քեզ պահ մը բնութեան կ'ուզեմ տանիլ։ Մենք  
բնականոն բաները լաւ ըմբռնելու համար շատ անգամ  
բնութեան դիմելու պէտք կ'ունենանք։ Ապագայ սե-  
րունդներու գոյութիւնը ապահովելու համար բնութեան  
ի գործ դրած անխոնջ ջանքերու ու զոհաբերումներու  
պատմութիւնը՝ աշխարհիս ամենադիւթիչ պատմութիւ-  
նըն է։ սէրը՝ որ քու սրտիդ մէջ արթնցած է, այս  
պատմութեան հերոսն է։ Բուսական ու կենդանական  
աշխարհի մէջ սեռային զգացում ու յարաբերութիւն-  
ները որչա՞փ պարզ ու որչափ անմեղ երեսոյթներ են։  
Դիտէ բնութիննը՝ հոն կատարուած բոլոր գործունէու-  
թիւններու միակ նպատակ ու կեղրոնը այս է։ Երփնե-  
րանգ ծաղիկներու գոյները, անոնց անոյշ բուրումները,  
հազար տեսակ անուշահամ պտուղներ, թռչնոց քաղցր  
մեղեղի ու ճռուղումները, սիրամարդի ու թութակի  
սքանչելի կերպով նկարուած փետուրները, առիւծի

յաղթապանծ բաշը , գաղթումներ , կառաղի կռիւներ ու  
անվերջանալի թշնամութիւններ՝ ուրիշ բան չ մը չեն ,  
այլ բնութեան սիրաբանութիւնները՝ ու այս ուղղու-  
թեամբ թափուած ճիգերն են :

Երբոր մեր աչքերը մարդկային ցեղի բարձր մա-  
կարդակը դարձնենք , կը կին նոյն բաներու ականատես  
կ'ըլլանք . միայն թէ հոս սէրը ու սեռային զգացումնե-  
րը աւելի բարձրացած ու աւելի նրբացած կը դոնենք .  
այս նպատակի սիրոյն ի գործ դրուած ջանք ու զոհո-  
ղութիւնները անհունապէս աւելի մեծ ու աւելի նըշա-  
նակալից են : Հոգերուղիս բանաստեղծութիւններ , եր-  
գեր ու տաղեր , վիպական սիրահարութիւն ու քաջա-  
գործութիւններ , մայրական գորովն ու զոհաբերումնե-  
րը՝ հայրական զգուանքն ու հոգածութիւնները՝ նոյն  
սիրոյ պատմութեան , նոյն ուղղութեամբ եղած արտա-  
յալտումներն են : Բնութիւնը ժամացոյց մըն է որու  
զսպանակը սէրն է , որ կը մղէ զայն , կը կենդանացնէ  
ու կը յաւերժացնէ զայն :



## ՍԵՐԱՅԻՆ ԲԱՐԵՇՔՉՈՒՄԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Բնութեան մէջ՝ ըլլայ բուսական, ըլլայ կենդանական շրջանակներու մէջ իշխող տարրը միշտ իգական տարրը եղած է. բոլոր դասակարգերու մէջ մինչև մարդկային ցեղը, էգերը արուներէ աւելի մեծ, աւելի զօրաւոր ու աւելի կենսունակ են. ամենուրեք էգերն են որ կը կառավարեն, էգերն են որ կ'ընտրեն ու կը պաշտպանեն Մինակ մարդկային ցեղն է որ այս կանոնին բացառութիւն մը կը կազմէ. հոս ընդհանուր առմամբ արական սեռն է որ կը գերազանցէ. այր մարդիկ մարմնով աւելի զարգացած ու աւելի ուժով ըլլալով հանդերձ՝ մտքով ու գործունէութեամբ ալ իգական սեռի գերադաս կրնան համարուիլ:

Բնութեան մէջ միայն միքրոպներու ու ամիպաներու ստորին պասակարգը կը մնայ, ուր էգ և արուի զանազանութիւնը չիկայ. բայց հոս ալ՝ անոնց կենցաղավարութեան ու գործունէութեան բոլոր երեսոյթները իգականի բնոյթ մը կը ներշնչեն. այս ստորին դասակարգի բոլոր անհատները առանց խորութեան, մեզի անծանօթ կերպով մը, յղանալու ու նոր սերունդ յառաջ բերելու կարողութիւնը ունին. մինչդեռ յղանալ ու ծնանիլ իգական սեռի յատուկ գործունէութիւն մ'է: Այս երեսոյթներու վրայ յենլով է որ, կենսաբանները մեզի կ'ըսեն. գոյութեան առաջին էակը իգականն է, իսկ արականը՝ իբրև երկրորդական մի արարած, բարեշրջման հոլովումով, շատ ժամանակներ վերջը իգա-

կանէ մը ծնունդ առած է և կամաց կամաց կտտարելազործուելով այր մարդու այժմու բարձր դիրքը զրաւած է:


Կեանքի ամենանախնական ձեւերէն մինչև մարգը՝ թէ բուսական թէ կենդանական գոյութեանց բոլոր խաւերուն մէջ, արուները իրենց յատուկ մասնաւոր բարեշը ջում մը ունին. կենդանաբանական սանդուխներէն որչափ բարձրանաս, էդ և արուներու միջև եղած համեմատական տարբերութիւնը այնչափ կը նուազի. իսկ դէպի վար առնուած ամէն քայլի մէջ, արուները՝ էգերէն, ալ աւելի փոքր, ալ աւելի թերի ու յետամնաց ըլլալու գատապարտուած են: կենդանաբանական դասակարգերու մէջ մեր հանդիպած ամենաստորին առաջին արու էակը՝ ուրոյն կենդանիի մը ձեն անգամ չունի. անիկա կենդանի մը ըլլալէ աւելի արգասաւորման պղտիկ գործիք մըն է, որ իր պարտականութիւնը կատարելէ վերջ կ'անհետի: կանեփի արական տունկը, իգականէն շատ փոքր ու տկար ըլլալով հանդերձ՝ արդասաւորման գործողութենէ անմիջապէս վերջը կը չորնայ ու կը մեռնի. իսկ իգական տունկը՝ երկայն ժամանակ կը մեծնայ ու կը ծաղկի:

Ծովերու մէջ տեսակ մը խեչափառներ կը գտնըուին, որոնց արուները՝ էգերէն համեմատաբար այնչափ փոքր ու տկար են, որ էգերը այս խեղճուկ ամուսիններէն տասնեակ մը իրենց մարմնոյն մասնաւոր գըրպաններուն մէջ զետեղելով՝ զանոնք իրրեւ մակարոյժներ ցկեանս իրենց հետ կը պտտցնեն: Քեզի շատ ծաւ-

Նօթ սարգերու արուները՝ էգերու հազիւ թէ մէկ չու-  
քորդին կը հաւասարին : Աւելի բարձր դասակարգի  
կենդանիներն անգամ պղտիկ արուներ կ'ունենան .  
մասնաւոր ձուկեր կան որոնց արուները այնչափ փոքր  
ու տկար են որ , ձկնորսները զանոնք որսալու ժամա-  
նակ մինակ էգերը կ'ընտրեն ու արուները կըկին ջուրը  
կը նետեն :

Թոչուններու ու չորքոտանիներու մէջ արուները  
շատ զարգացած ու բարեփոխուած վիճակ մը թէւ  
ունին , բայց կըկին շատ տեսակէտներով իշխող տարրը  
իգականն է :

Երբոր ի նկատ առնենք մարդկային ցեղը որ Աս-  
տուծոյ դրօշմ ու նմանութիւնը ունի իր վրայ , խնդիրը  
բոլորովին տարբեր հագամանք մը կ'առնէ , շիտակ է  
որ հոս՝ մարմնով ու թերեւս մտքով իշխող տարրը  
արականը կը հանդիսանայ , բայց և այնպէս իգականն  
ալ ունի իր խիստ կարեւոր դերն ու բաժինը կեանքի  
գործունէութեանց մէջ , նա ալ օժտուած է , այնպիսի  
ձիրք ու կարողութիւններով , որոնք ցեղի բարօրու-  
թեան համար նուազ կարեւոր չեն : Սեռային խնդիրը  
մարդուս համար լոկ արգասաւորման խնդիր չէ բնաւ ,  
ինչպէս որ է կենդանեաց մէջ , այս հարցը ունի իր ե-  
տեւը՝ թագսւն նուիրագործումներ , ազնիւ ձգտումներ  
ու սուրբ պարտականութիւններ , որոնք միայն մարդ-  
կային ցեղի համար վերապահուած են :





## ԱԵՌԱՅԻՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԲՈՅԱԲՈՒ ՄԷՋ

~~~~~

Գարնան անուշ առաւօտ մը՝ պտոյտի համար լեռները, անտառները ու պարտէզները այցելելու առիթը ունեցած ես անշուշտ. հոն յաճախ հիացումով դիտած ես բուսական աշխարհի սիրալի տեսարանները՝ ծաղկեփունջեր շինած ու զանոնք հոտոտած ես, պըտուղներ քաղած ու կերած ես: Մենք մարդիկս բնութեան գեղեցկութիւններէ հմայուած և անոր մեզի շընորհած անսահման բարիքներէ հրապուրուած, շատ անգամ կը բացագանչենք. նախախնամութեան կարգադրութիւնները ի՞նչ ոքանչելի են. նա բոլոր բնութիւնը՝ իր բոյսերովը, իր կենդանիներովը, իր դաշտերով, իր ծովերով, մարդկալին ցեղի համար պատրաստած է: Այո՛, այդպէս է, բայց բնութիւնը մեզմէ առաջ ուրիշ նշանակէտ մը ունի, որ իրեն համար աւելի սուրբ և աւելի նուիրական է, ուստի նա իր գեղեցկութիւնը, հրապոյրն ու փառքը, իր ամբողջ գոյութիւնը ամենէն առաջ այս նպատակի համար յատկացնել կը սիրէ. այս նշանակէտը՝ իր սեռալին յարաբերութիւնները և իր ապագայ սերունդներու գոյութեան ապահովումն է:

Ի՞նչ են այն անուշահոտ ծաղիկները ու քաղցրահամ պտուղները, որոնց տղաք այնչափ սիրահար են: Ծաղիկները ուրիշ բան մը չեն՝ այլ բոյսերու սեռալին յարաբերութեանց գործարանները, իսկ պտուղները՝ բոյսերու նորածին սերունդներն են: Ծաղիկները հոտոտալու համար քիթդ կը տանիս, ահաւասիկ շատ բարակ գեղին կամ մոխրագոյն փոշի մը, հոն կը կպի, որ յաճախ անուշ հոտ մըն ալ ունի իր հետը: Ի՞նչ է այս

փոշին, ան ծաղկի արական մասն է, որ անոր իգական մասը արգասաւորելու կը ծառայէ:



Նօ. 1

Ութը տարբեր տեսակ ծաղիկներու արական փոշիները հազար անգամ մեծցուած.

Նօ 2

Երկայնքը կտրուած ծաղիկներ որոնց ծուարանները կը տեսնուին.

Ծաղիկները արգասաւորման տեսակէտէն երեքի կը բաժնուին. Ա. շատ ծաղիկներու իգական և արական մասերը նոյն ծաղկի մէջ կը գտնուին, արական փոշին ծաղկին գաղաթը՝ խոկ իգական մասը (սերմերը կամ ծուարանը) վարը կը գտնուին. այս երկու մասերը խողովակով մը իրարու կցուած են, այսպէսով վեր գտնուող արական փոշին այս խողովակի միջոցաւ վար կը տարուի և ամուսնութիւնը պղտիկ ծուարանի մէջ տեղի կ'ունենայ: Բ. կան նաև ուրիշ տեսակ բոյսեր որոնց իգական մասը զատ՝ ու արական մասը զատ ծաղիկներու վրայ կը գտնուին այսպէսով նոյն բոյսը երկու տեսակ ծաղիկներ կ'ունենայ, այսինքն իգական և արական ուրոյն ծաղիկներ, որոնց արականը ժամանակը գալուն պէս իգականը կ'արգասաւորէ: Գ. կան նաև բոյսեր, որոնց իգական կամ արական ծաղիկները ոչ թէ նոյն բոյսի վրայ, այլ զատ զատ բոյս կամ ծառերու վրայ կը գտնուին, այս վերջին տեսակին օրինակ են, քեզի շատ ծանօթ թթենին, թզենին ու պիստակենին: Այս ծառերը կ'ունենան իգական և արական

ուրոյն ծառեր, իգական եւ արական ծաղիկներով, սոնց տերեւ և ճիւղերը իրարու յար և նման են, բայց ծաղիկները իրարմէ կը տարբերին, արական ծառեր երբեք պտուղ չեն կրնար արտադրել և մինակ իրենց փոշիներով իգական ծառերը արգասաւորելու կը ծառայեն:

Բոյսերու արգասաւորումը շատ զարմանալի միջոցներով տեղի կ'ունենայ. արգասաւորման միջոցները՝ գարնան անոյշ հովերը, նախշուն թիթիոնիկներ, ժրածան մեղուներ և այլազան միջատներ են. ծաղիկներու արական փոշին՝ շատ միջատներու միակ սնունդը կը կազմէ: Շատ անգամ իգական և արական ծառեր կամ տունկեր իրարմէ տասնեակ մղոններ հեռու կը գտնուին, բայց հոգ չէ, հովերը՝ այս առատ ու բարակ փոշին իրենց թեթև թեթերով կը փոխադրեն ամենուրեք՝ ամենայն դիւրութեամբ: Միջատները՝ ծաղիկներու մեղրանիթ, անոյշ հոտ ու սիրուն գոյներէն հրապուրուած կ'ուգան ու պահ մը կը թառին անոնց վրայ և նախաճաշ մը ընելէ վերջ, իրենց ոտք, բերան ու թեթերով այս փոշիները անգիտակցաբար կը տանին շատ մօտ, կամ շատ հեռու վայրեր և մայր ծաղիկները արգասաւորելով քեզի համար քաղցրահամ պտուղներ ու ապագայ ծառեր կը պատրաստեն:

Ծաղիկներու արական փոշին ըստ պատշաճի տարբեր հանգամանքներ կ'ունենայ, այն ծաղիկները որ հովերու միջոցաւ սեռային յարաբերութեան մէջ պիտի մտնեն, կ'ունենան շատ չոր ու շատ բարակ փոշի մը որ մինակ հովերով կարելի է փոխադրել. իսկ անոնք որ միջատներու միջոցաւ պիտի ամուսնանան, կ'ունենան խոնաւ ու կպուն փոշի մը, որ մինակ միջատնե-

բու միջոցաւ տանիլ կարելի է։ Այն ծաղիկները որ այս գործունէութեան համար հովերու կը կարօտին, գեղեցիկ գոյներ ու անոյշ հոտեր չեն ունենար, քանզի հովը զգացում չունի և հրապոյրի կարօտ չէ. իսկ անոնք որ միջատներու կարօտ են, կ'ունենան անոյշ հոտ, փայլուն գոյներ ու քաղցր մեղրանիւթ, որպէսզի իրենց բուրումով, գոյն ու մեղրանիւթով կարենան հրապուրել միջատները և այսպէսով իրենց սեռային յարաքերութիւնը կարելի ըլլայ. այս պատճառաւ ամեն տեսակ բոյսեր՝ միջատները իրենց հրապուրելու համար յաւէտ մրցման մէջ են։

Շատ ծաղիկներ ու եէ միջատի մը միջոցաւ կրնան արգասաւորուիլ, բայց կան ալ ծաղիկներ՝ որ իրենց ամուսնութեան համար, լոկ այսինչ միջատի կը կարօտին և առանց անոր իրենց սերունդը գոյութիւն չը կրնար ունենալ. այս նազելի միջատը, թէ այն ծաղկին մէջ գտնուած սնունդին և թէ անոր հոտ ու գեղեցկութեան այնչափ սիրահարուած կ'ըլլայ որ այս ծաղիկը ուր որ ալ պահուած ըլլայ, զայն կը գտնէ ու անոր արգասաւորումը կարելի կ'ընէ։

Ստորին դասակարգի պատկանող կարգ մը բոյսեր ալ կան, որոնց ծննդական մասերը հողին տակը կը գտնուին, հոս ալ հողը՝ հովի պէս, այս տեսակ բոյսերու արգասաւորման միջոց կ'ըլլայ։

Ահաւասիկ այս է բոյսերու սեռային յարաքերութեան հակիրճ պատմութիւնը. կարծեմ հիմայ կը տեսնես որ սեռային յարաքերութիւնը կամ սէրը՝ բուսական աշխարհի մէջ ի՞նչ պարզ, ի՞նչ սքանչելի եղանակով մը տեղի կ'ունենայ։ Բնութիւնը այս գործունէութիւնը ապահովելու համար անհաւատալի զոհողութիւն-




Ներ ըրած է, չէ յլացած բան մը որ կարելի է ընել։  
Բոյսերու ամենաթանկագին ու ամենագեղեցիկ մասերը՝  
այսինքն ծաղիկ, պտուղ ու հունտերը՝ այս նպատակի՝  
համար յատկացուած են։ Քու ամենօրեայ սնունդը՝  
կազմող բազմատեսակ հացահատիկներ, բրինձ, ցորեն  
և արմտեաց մէն մի հատիկը այս գործողութեան կրկ-  
նումովը քեղի համար պատրաստուած են։

Սիրելի տղա՛ս, դուն ալ մարդկային ընկերու-  
թեան գեղեցիկ մի ծաղիկն ես, դուն ալ մեր քաղցրա-  
համ ու անուշահոտ պտուղն ես, բնութիւնը քու մէջդ  
ալ առնական բուրումներ զետեղած է, զորս պարտիս  
Նախախնամութեան նպատակին ծառայեցնել, պէտք չէ  
որ զանոնք անգիտակցաբար չարաչար գործածես ու  
դուն քեղի վնասես, պէտք չէ՝ որ զանոնք մսխես  
առ ոչինչ։

---

ՍԵՐԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ՄԷՋ



Կենդանիներու մէջ ալ սեռային յարաբերութիւնը  
այնչափ պարզ է, որչափ բուսական աշխարհի մէջ։  
Մինակ թէ հոս աւելի զգացում ու աւելի ազնուացում  
մը կը նշմարուի ու բնազդումները մեծ գեր մը կը խա-  
ղան։ Արգասաւորման ժամանակը գարնան մի քանի  
ամիսներուն յատկացուած է։ այս կարճ ժամանակամի-  
ջոցին մէջ սեռային յարաբերութիւնը կամ ուղղակի էզ

և արուներու միացումով կամ բոյսերէ ոմանց պէս այս  
յարաբերութիւնը հեռուէն հեռու տեղի կ'ունենայ: Ստո-  
րին գասակարգէն ծովային կենդանիներ ձուեր ածելով  
կը բազմանան. այս ձուերը երբեմն մայր կենդանիի  
արգանգին մէջ, երբեմն ալ ածուելէն վերջը դուրսը՝  
արուներու առնական հեղուկի միջոցաւ կ'արգասա-  
ւորուին:

Ծովերու մէջ շատ տեսակ ձուկեր կան, որոնք  
իրենց նոր սերունդը ծովերու վտանգներէն ազատելու  
բնազդումով ամէն տարի իրենց ձուերը ածելու համար  
գաղթելու սովորութիւնը ունին: Ասոնք գարունը գա-  
ռն պէս այս բնազդումէն մղուելով՝ գետերու հոսանք-  
ներէն գէպի վեր միլիոններով կը ճամբորդեն, յոր-  
ծանքներու ու հոսանքներու դէմ կը մաքառին, մինչև  
անգամ ջրվէժներէն վեր կը ցատկեն և հազար տեսակ  
գժուարութիւններէ վերջ, կը գտնեն խաղաղ վայր մը  
ուր ժայռերու խոռոչներուն մէջ կը դնեն իրենց ձուերը:  
Մրու ձուկեր երկու կերպով կ'արգասաւորեն այս ած-  
ուած ձուերը. կամ ուղղակի զանոնք կը գտնեն ու ա-  
նոնց վրայ կը թափեն իրենց սերմը, կամ միլիոններով  
սաղմային բջիջներ պարունակող իրենց արական սերմը  
գետի ջուրերուն մէջ հոսանքն ի վար կը թափեն առա-  
տապէս և այսպէսով ուր որ ձուեր կան զանգուածով  
կ'արգասաւորուին: Մի քանի օրուան ընթացքին նորա-  
ծին ձուկեր երեան կ'ուգան որոնք կարճ ժամանակին  
մէջ չափահաս ըլլալով հոսանքն ի վար դիւրութեամբ  
կը վերագառնան ծովը՝ իրենց բնավայրը: Շատ զար-  
մանալի է դիտել ձուկերու այս մեծ ձեռնարկն ու զո-  
հողութիւնը, այս արկածալի ճամբորդութեան միջոցին  
այս ձուկերու մեծ կարաւանին կէսը ճամբաներու մէջ

կը ոչնչանան . անոնք այս ամէնը առ ոչինչ կը համարեն միայն թէ իրենց ապագայ սերունդներու գոյութիւնը ապահովուած ըլլայ :


Թռչուններու մէջ նոյնպէս տեսնուած գաղթելու սովորութեան կարեւոր զբդապատճառը . իրենց նոր սերընդեան հանգիստն ու սնունդը ապահովելու համար յարմար վայրեր որոնել եղած է : կենդանաբանական աշխարհի սանդուխներէն որչափ վեր բարձրանաք , սեռային զգացումը , նորածին ձագերը հոգալու տենչը այնչափ աւելի նշմարելի կ'ըլլայ : Զուկեր շատ չեն հոգար իրենց ձագուկները , մասնաւոր բոյներ չունին . իսկ թռչունները իրեւ բարձրագոյն դասակարգ մը՝ կը հոգան իրենց նորածինները . կը կերակրեն զանոնք , կը գուրգուրան անոնց վրայ , մինչև որ անոնք իրենք զիրենք հոգալու վրճակի հասնին :

Չորքոտանի կենդանեաց մէջ սեռային յարաբերութիւնը աւելի բարձր մակարդակ մը ունի , բնագդումի հետ ուղեղն ու սիրտն ալ մասամբ ունին իրենց բաժինը . անոնք ընտանիք կը կազմեն արու և էդ միասին կ'ապրին , իրենց նորածինները կը ծծցնեն և այսպէսով իրենց մարմնոյն կենսատու հեղուկներէն անոնց բաժին հանելով՝ մէծ զոհողութիւն ու անուրանալի սէր մը ցոյց կուտան . զանոնք վտանգներու առջև պաշտպանելու համար կատաղի դիմաղրութիւններ ընելէ զատ , շատ անզամ ձագուկներուն սիրոյն համար իրենք զիրենք ալ կը զոհեն : Որսորդներու վկայութիւնը այն է որ , որսալու համար , ձագուկներ ունեցող էգերը ամենավրտանգաւոր ու ամենակատաղի են . էդ առիւծը ու էդ արջը ասոր օրինակներ են :


Դուն , այս տողերը կարդալով լաւ հասկցար որ

կենդանական աշխարհի մէջն ալ, այս յարաբերութիւնը շատ պարզ ու անմեղ երևոյթ մըն է, որ կը ծառայէ սերունդներու ապագայ գոյութեան։ Բոլոր արարածները՝ այս կէտ նպատակի համար ի՞նչ անհուն զոհողութիւններ կ'ընեն։ Ինչ սքանչելի կերպով օդը, ջուրը, մինչև անգամ հողը՝ այս յարաբերութեան իրագործման միջոց կը հանդիսանան։ Բնութեան մէջ չիկայ բան մը որ սեռային յարաբերութեան չափ անմեղ, անոր չափ պարզ ու անոր չափ մաքուր ըլլայ, հոն չիկայ-չարաչար գործածում, հոն չիկայ զեղծում։ Շատ ցաւալի է որ մենք մարդիկս այս յարաբերութիւն ու զգացումը չարաչար գործածելով՝ բնականը անբնական, անմեղը մեղաւոր ու մաքուրը պիղծ ըրած ենք։

Մեր անկեղծ փափաքն այն է որ, քու սրտիդ մէջ արթնցած կամ արթննալիք այս սիրոյ զգացումը՝ մնար անբիծ ու պայծառ ինչպէս որ է բնութեան մէջ։ Քեզի համար չիկայ բան մը աւելի թանկագին և աւելի նըռուիրական՝ քան ապրիլ մաքուր ու աղնիւ, մինչև ամուսնութեանդ օրը՝ այն ատեն մինակ պիտի կարենաս վայելել ընտանեկան սուրբ խորանին իրական երջանկութիւնը, կը գտնուին կարգ մը մարդիկ որ այս սեռային զգացումները կ'անարդեն զարդն ։ « անասնական կիրքեր» յորջորջելով։ այսպիսիներ՝ անդիտակցարար կ'ուզեն ակնարկել սիրոյ զեղծումները ու չարաչար գործածումները։ այո՛, չարաչար գործածուած սիրոյ անզուսպ ու անտաշ զգացումները՝ շատ բիրտ ու շատ տրգեղ ձեւեր կրնան առնել, բայց մենք այս զգացումը կը սիրենք նկատել մաքուր ու աղնիւ փափաք մը, ինչպէս որ է բնութեան մէջ և աչքի առջև ունենալով՝ պարզութեան նշան վարդն ու շուշանի սեռային զգացումները պիտի համարձակէինք զայն «բուսական սէր» անուանել ոչ թէ «անասնական կիրքեր»։




## ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹԻՒՆ



Բնութեան պատմութեան մէջ ծննդաբերութիւնը՝ միշտ ամենայարդելի ու ամենապաշտելի հոգ մը եղած է. կեանքի բոլոր գործառնութիւնները այս կեդրոնին շուրջը դարձած են։ Ծննդաբերութիւնը ուրիշ բան մը չէ, բայց կեանքի կամ գոյութեան շարունակութիւնն է. ծնանող կեանքերու միջև ընդհատում չիկայ բնաւ, ուեէ մի արարած, իր մարմնէն կենդանի բջիջ մը կ'արտադրէ, այս նորածին բջիջը յարմար պարագաներու տակ կը մեծնայ ու կը զարգանայ, նա ալ իր կարգին՝ մեռնելէն առաջ, ապրող ուրիշ բջիջի մը ծնունդ կուտայ, այսպէսով կեանքը յաւէտ կը փոխանցի մէկէն միւսը։ Ուստի քու կեանքդ ծնողացդ ու նախնեացդ կենաց շարունակութիւնն է։ Ծննդաբերութիւնը՝ ըլլայ բուսական, ըլլայ կենդանական աշխարհի մէջ, գրեթէ նոյն եղանակով տեղի կ'ունենայ, այն է արգասաւորման միջոցով։


Արգասաւորում, այս կարեոր երեսյթը՝ երկու սեռերէ արտադրուած մէյ մէկ կենդանի էակներու իրարուհետ միացման մէջ կը կայանայ. այս կենդանի էակները սաղմային բջիջներ կը կոչուին. այս երկու սեռերու սաղմային բջիջները, կարծես իրարու ամբողջացուցիչ մասերը կը կազմեն և զիրենք իրարու մօտ քարշող մազ-

Նիսականութիւն մը ունին իրենց մէջը ։ Թուով շատ  
ցանցառ գտնուող իգական սաղմային բջիջները գտնե-  
լու համար, բիւրաւոր արագաշարժ արական սաղմային  
բջիջներ, երբեմն օրերով կը վազեն, վերջապէս ասոնց-  
մէ մէկը կը գտնէ իգական բջիջը և անոր մէջը մտնե-  
լով կը կորսուի անոր մէջ, ահաւասիկ այս երկու բջիջ-  
ներու միացումով արգասաւորուած նոր բջիջ մը կազ-  
մուած է, նոր կեանք մը սկսած է, ծնունդը՝ կստար-  
ուած իրողութիւն մըն է։ Այս արգասաւորման գործո-  
ղութիւնը, ստորին կենդանեաց մէջ շատ անգամ մարմ-  
նէն դուրսը տեղի կ'ունենայ. նորածիններ առջի օրէն  
իրենք զիրենք հոգալու ու իրենք զիրենք զարգացնե-  
լու ստիպողութեան տակ կը գտնուին. իսկ բարձրագոյն  
կենդանեաց մէջ այս միացումը մայրական մարմնոյն  
մէջ կը պատահի և նոր սկսած կեանքը կտրճ կամ եր-  
կայն ժամանակ մօր որովայնին մէջ կը հոգացուի ու  
կը մեծնայ:



Նօ 3

Իգական սաղմային բջիջը՝ որու  
մէջ արականը մտնելու վրայ է։  
(200 անգամ մեծցուած)



Նօ 4

Սբական սաղմային  
բջիջներ  
(200 անգամ մեծցուած)

Միաբջիջ արարածները՝ այսինքն միքրոպներու  
ընտանիքը՝ էակներու ամենաստորին դաստակարդը կը

կաղմեն, ասոնց մէջ սեռի տարբերութիւն, հետեաբար արգասաւորում չիկայ. ծննդարերութիւնը շատ պարզ եղանակով մը՝ այսինքն ինքնաբաժանակ տեղի կ'ունենայ: Միքրոպի մը մարմինը մէջտեղէն երկուքի կը բաժնուի և այս երկու մասեր երկու միքրոպներ կ'ըւլան, ասոնք ալ իրենց կարգին կրկին երկուքի կը բաժնուին և այս գործողութիւնը կը շարունակուի յաւէտ լան նաև միքրոպներ որոնց մարմնոյն մէջ ծննդարերութեան ժամանակ երեք կամ աւելի կէտեր նշմարելի կ'ըւլան, քիչ վերջը միքրոպը կը պայթի և իր մէջէն այս կէտերը իրրե նորածին միքրոպներ դուրս կուգան:

Ինքնաբաժանմամբ բազմացող միքրոպներու համար, քեզի շատ ծանօթ օրինակ մը կ'ուզեմ տալ, խըմորի միքրոպն է այն. խմորումը տեսակ մը միքրոպներու միջոցաւ կատարուած քիմիական գործողութիւն մըն է, որ ամէն օր մեր հացերը շինելու համար կը գործածենք. այս միքրոպները յիշուած եղանակով սարսափելի արագութեամբ կը բազմանան. մի քանի ժամուան մէջ մէկ հատը, միլիարներու կրնայ հասնիլ: Այս տեսակէն միքրոպներ թէև շատ արագ կը բազմանան, բայց նոյն համեմատութեամբ ալ կը կորսնցնեն իրենց կեանքերը. բնական մահով, զիրար ուտելով կամ ուրիշներու կեր ըւլալով կ'ոչնչանան:

Բուսական աշխարհի մէջ սերմերը կամ հունտերը, արգասաւորուած խգական սաղմային բջիջներն են. անոնք նորածին բոյսեր են որ յարմար պարագաներու տակ ծլելու ու մեծնալու յատկութիւնը ունին: Սերմերը իրենց պատկանած բոյսին կատարեալ պղտիկ նըմոյշներն են, ինչպէս որ գառնուկը ոչխարի մը նմոյշն է: Կաղնի ծառին սերմը՝ իր մէջ կը պարփակէ շատ

փոքրիկ կաղնիի ծառ մը , որ ունի երկու տերևներ բուն  
մը և արմատ մը . նոյն տարրական մասերէ կը բաղկա-  
նան նաև բոլոր բոյսերու սերմերը , այնպէս որ կաղնի  
ծառին մէկ ճիւղը առնել ու հողին մէջ տնկել կամ ա-  
նոր սերմը առնել ու հողին մէջ դնել նոյն գործո-  
ղութիւնն է :


Բազմածնութիւնը՝ ստորին դասակարգի պատկա-  
նող բոլոր կենդանեաց և բոյսերու մասնաւոր մի-հան-  
գամանքն է . ծովալին սողուններ , գորտեր , միջատներ  
և ձուկեր անհաւատալի կերպով բազմածին են , ամէն  
մի ծննդաբերութեան հարիւրներ , հազարներ կը ծնանին .  
Դասակարգերը քանի բարձրանան ծնունդներու թիւը  
այնչափ կը պակսի , այնպէս որ բարձրագոյն դասակար-  
գի չորքոտանիներ և մարդկալին ցեղը ընդհանրապէս  
մէջ մէկ հատ կը ծնանին : Ստորին դասակարգի կեն-  
դանեաց նորածիններուն կեանքը սպառնացող այնչափ  
շատ վտանգներ ու պարագաներ կան՝ որ բնութիւնը մ/-  
նակ բազմածնութեամբ անոնց սերունդներուն գոյու-  
թիւնը կրցած է ապահովել . անոնք այսչափ առատ նո-  
րածիններ ունենալով հանդերձ՝ անոնցմէ շատ քիչեր  
չափահասութեան ժամանակին հասնելու բաղդը կ'ունե-  
նան : Բնութեան մէջ շատ կենդանիներ կան , որոնք եթէ  
իրենց ծննդեան համեմատութեամբ բազմանային մարդ-  
կութեան համար աղէտ մը պիտի ըլլային : Թերեւս լը-  
սած ես կարգ մը մակաբոյծ միջատներու վրայ , որոնք  
մեր սնունդը կազմող բոյսերու վրայ կ'ապրին . ու զա-  
նոնք թէ ուտելով թէ հիւանդացնելով կը փճացնեն .  
Եթէ այս վնասակար միջատները՝ թռչուններու միջոցաւ  
չմեռցուէին , վստահաբար մարդկալին ցեղը՝ մի քանի  
տարիներ վերջը ուտելու սնունդ չկարենալով գտնել ,

սովամահ պիտի ըլլար ու ոչնչանար, ուրեմն մեր կեանքը ուչափ կը պարտինք թռչուններու: Բնութեան մէջ կան կարգ մը միջատներ որոնց կենաց ամբողջութիւնը կարծես ծննդաբերութենէ կը բաղկանայ. անոնք աշխարհ գալէն քիչ վերջը կը յղանան և ծննդաբերութեամբ հարիւրաւորներ ծնանելէ անմիջապէս վերջը կը մեռնին:


Ատորին դասակարգի կենդանիներ ձռեր ու հաւկիլիններ կը ծնանին, այս նորածին էակները շատ նախնական վիճակի մը մէջ են, ընդհանրապէս չեն հոգացուիր և իրենց բաղդին թողուած են, այս սլատճառուանոնց մեծամասնութիւնը կը փնանան: Զորքուոանի կենդանիներ՝ կատարելագործուած ու կենդանի նորածիններ կ'ունենան. ասոնք ժամանակ մը իրենց մօրարգանդին մէջ, իրենց մօր արիւնով կը սնանին ու կը մեծնան. աշխարհ գալէն վերջն ալ իրենց մօր միջոցաւ կը հոգացուին կը սնանին ու կը սլաշտպանուին. միւսներուն պէս բնութեան անագորոյն հոգածութեան չեն թողուած ու այս պատճառով ասոնց կեանքը աւելի ապահովուած է:

Այս տողերը կարգացող տղա՛ս, դուն ալ կենսաբանական տեսակէտով այս կանոնի բացառութիւն մը չես կազմեր, քու գոյութիւնդ ալ մօրդ արգանդին մէջ ծնողացդ սաղմային բջիջներու միացումովը սկսած է, ինը ամիսներ հոն մօրդ արիւնով սնանելէ վերջ, աշխարհ եկած ես. այնպէս որ քու գոյութեանդ թուականը՝ ծննդեանդ թուականէն ինը ամիսներ աւելի է: Քու գոյութեան օրէդ մինչև հիմա բնութիւնը քեզ կը զարդացնէ ու կը ծաղկեցնէ ամէն տեսակէտով, որպէսզի դուն ալ օր մը արական ցեղի կատարեալ ու չափահաս

մի նմուշը բլլաս և այր մարդու վայել կերպով ստանձնես անոր բոլոր պարտականութիւնները :



## ԱՐԲՈՒՆՔԸ



Մարդիկ և կենդանիներ ունին մանկութեան ժամանակամիջոց մը, որու կը յաջորդէ արբունքի ժամանակամիջոցը. մանկութեան ժամանակը կեանքի երկայնութեան հետ միշտ համեմատական եղած է. այն արարածները որոնք երկայն կեանք մը կ'ապրին, կ'ունենան նաև երկայն մանկութեան ժամանակ մը. անոնք որ կարճ կեանք մը ունին կ'ունենան կարճատե մանկութեան օրեր։ Նապաստակի մը համար մանկութեան ժամանակը մի քանի ամիսներ, ձիու մը համար երկու երեք տարիներ, իսկ մարդու մը համար տասներկուտասնըերեք տարիներ կը տեէ։

Արբունքի տարիքը հասած արու կենդանիներու մէջ յանկարծակի յեղաշրջում մը կ'սկսի, քանզի բնաւթիւնը զիրենք տիպար արուներ ընելու ձեռնարկած է, որպէսզի սեռային յարաբերութեամբ էզերը արգասաւորելու կարող լլան։ Ասոնք արագ արագ զարգանալու կ'սկսին, կը զիրնան, կը զեղեցկանան ու կ'ուժովնան, մազերը կամ փետուրները կ'երկնան ու իրենց մորթէն արտադրուած խղով մը կը յղկուին, իրենց մարմնոյն բոլոր գոյները աւելի փայլուն ու աւելի ուշագրաւ կը դառնան, ցուլն ու այծեամը եղջիւրներ կը հանեն ու կատաղի բնոյթ մը կ'ստանան։ Ինդհանըապէս ամէն

ցեղ իրեն յատուկ առնական հոտ մը արտադրելու կ'սկըսի որ էգերու համար հաճելի է և զանոնք հրապուրելու կը ծառայէ . մուշկ ըսուած այն թանկարժէք ու խիստ անուշահոտ նիւթը՝ որ տեսակ մը եղջերուի արական անդամէն կը հանուի այս արբունքի արտադրութիւններէն մին է :

Արբունքի ժամանակն է որ օրն ի բուն կ'երդեցնէ րանաստեղծի սիրահար սոխակը ու երկրագործի սիրուն արտոյտը . այո՛ , արբունքի սիրային զգացումներն են որ կը լեցնեն բնութիւնը զարնան ճռուղումներով ու ճլվլումներով . արբունքի ժամանակը բնութեան մրցման ժամանակն է , հոն հազար ու մէկ տեսակ արսւներ , հազար ու մէկ տեսակ միջոցներով էգերը հրապուրելու համար կը մրցին իրարու հետ Յնագէտները մեզի լուր կուտան որ դեռ բնութեան մէջ , մեր լսածներէն շատ աւելի սքանչելի եղանակ ու նուազներ կան , զորս չենք կրնար լսել , քանզի անոնք օդային խաւերը այնչափ արագ կը թրթռացնեն որ մեր ականջները զանոնք մեզի հաղորդելու համար անկարող կը մնան :


Բուսական աշխարհն ալ իր կարգին երբէք չպակսիր տօնելու այս պճնահանդէսը , նա ալ ունի իր մանկութեան ժամանակը ու արբունքի պատմութիւնը , հոն ալ բնութիւնը կը թափէ իր վերջին ճիզը այս ուղղութեամբ , անշուշտ հոն ալ կան շատ զգացումներ ու շատ հրապոյրներ որ գաղտնիք են մեզի տակաւին : Յիրաւի ի՞նչ սխրալի է կարենալ լսել ու կարենալ տեսնել , գարնան արբունքի բնութիւնը՝ իր գեղեցկութիւններով իր երգերով , իր հոտերով , իր գոյներով և իր ամէն բաներով . ասոոց ամէնքն ալ բնութեան իր կէտ նալատակին հասնելու համար կատարած նախապատրաստութիւններն են :

Արբունքի ժամանակը բնութեան մէջ բաժանման ժամանակն է, արբունքի հասած կենդանիներ կամաց կամաց կ'սկսին հեռանալ իրենց մայրենի բոյներէն, ալ կ'ուզեն ըլլալ տղատ և ինքնազլուխ, չեն ուզեր տղատանիլ իրենց մօր թերուուն կամ բազուկներուն տակ, կը փափաքին իրենք ալ շինել տեղ տուն և ընտանիք: Յիշէ որ, արբունքի ժամանակը քու մէջդ ալ բնականաբար արթնցոցած է նոյն զգացում ու զաղափարները, դուն ալ շատ անգամ կ'ուզես բացակայիլ տունէն, կ'ուզես մշակել նոր յարաբերութիւններ, կը սիրես երթալ ու գտնել մտերիմ ընկերներ և ընկերուհիներ, այս ժամանակը քեզի համար կարեոր, բայց վըտանգաւոր ժամանակ մըն է. ուշադրութիւն ըրէ որ բարի ընկերներ գտնես և լաւ յարաբերութիւններ մըշակես. հոգ տար որ քայլերդ շիտա՛կ ու ընտրութիւններդ ուղիղ ըլլան. այս պահուն առնուած սխալ ընթացք մը բոլոր կեանքդ կրնայ փճացնել:

Արբունքի ժամանակը տղու մը համար տաներեք կամ տասնըչորս տարեկան հասակին մէջ կ'սկսի ու կը շարունակէ մինչեւ տասնըութերորդ տարիքը, այս տարիներուն մէջ մեծ յեղաշրջում կը պիտի անցնես, քու մէջդ ալ ծննդական կարողութիւններ ծաղկելու պիտի սկսին, բոլոր բնութեան մէջ տեղի ունեցող փոփոխութիւնները քու վրադ ալ պիտի կրկնուին, մինակ թէ քուկդ անոնցմէ շատ բարձր ու շատ նշանակալից են: Արբունքի հասած առողջ տղու մը մարմինը՝ սոկորներէն մինչեւ մազերը, մէկէն ի մէկ զարդանալու մեծնալու կ'սկսի, հասակը արագ արագ կ'երկննայ, մասները մեծ ծաւալներ կ'առնեն, ձայնը խրոխտ ու արական

կը դառնայ, երեսի ու մարմնոյն տարբեր վայրերը մազեր կը բուսնին, մտալին կարողութիւնները կը սրանան ու կը հասուննան, նա խիզախ, քաջ ու ձեռնարկող ըլլալու կ'սկսի, իր մէջը դէպի գեղեցիկը, դէպի բարին, դէպի ազնիւը մասնաւոր միտումներ կ'արթըննան։ Արբունքի հասած պատանի մը իր մարմնոյն մէջ սկսած մեծ զարդացում ու փոփոխութիւններու պատճառաւ ուրիշ ուեէ ժամանակէ աւելի պէտք է հոգ տարուի, նա պէտք է լաւ սնունգ առնէ, ութը ինը ժամեր քնանայ, ամէն օր պէտք է մաքուր օդ ծծէ և գոնէ օրական ժամ մը խաղայ ու մարդանք ընէ, որպէսզի բնութիւնը իր ձեռնարկած արբունքի գործունէութիւնը կարենայ յաջողցնել։ Արբունքի ժամանակը ձայնի փոխանցման ժամանակը ըլլալուն պատճառաւ խռչափողը մասնաւոր կերպով խնամուելու է։ ձայնի փոփոխման նշանները երեցած օրէն սկսեալ մինչև տարի մը շատ երգել ու բարձր ձայնով կանչել այս գործիքի խանգարումը կը այս պատճառել։ ուստի կատարելագոծուելու համար անոր պէտք եղած առիթը ընծայուելու է։

Ահաւասիկ բնութիւնը քեզ ալ այս ամէն միջոցներով կը պատրաստէ ըլլալու նմոյշ այր մարդ մը, որպէսզի առնական կորովով մը կարողանաս ստանձնել անոր ծանր պատասխանատուութիւնները, ըլլայ սեռալին յարաբերութեանց մէջ, ըլլայ կեանքի ուրիշ գործառնութեանց մէջ։ Դուն ալ պարտիս ըլլալ ազնիւ սիրող մը, պարտիս ըլլալ հերոս պաշտպանն ու նեցուկը իգական սեռին ու տկարին, պարտիս ըլլալ աննկուն կամքով ու ազնիւ հոգւով։




## ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

Զեզմէ ամէն մէկը պէտք է զիտնայ իր ծննդական գործարաններու մասին, ինչպէս զիտէ իր սրտին, իր ստամոքսի և իր աչքերու վրայով. այս ծանօթութիւնը կարծուածէն շատ աւելի կարեռէ. քսնզի այս գործարանը մարմնային զարգացման և բարոյական ազնըւացման հետ այնչափ սերտ յարաբերութիւն մը ունի որ զայն անտեսել մեծ սխալ մըն է:

Իգական ծննդական գործարանները մեծ մասամբ մարմնոյն մէջը զետեղուած են, իսկ արական գործարանները մեծ մասամբ դուրսը դրուած են. այս վերջինը այնպիսի տեղ մը կը գրաւէ և այնպիսի առածգական ու լպրծուն հիւսուածներէ շինուած է, որ ի բնէ արտաքին վտանգներու դէմ լաւ պաշտպանուած է։ Արական գործարանները կը բաղկանան երկու հաւելիթներէ, որոնք տոպրակէ մը կախուած են և ամուռձիգներ կը կոչուին. ամորձիգներու վերելը կը գտնուի առանդամը, որ ոչ այլ ինչ է, բայց խողովակ մը՝ որ միանգամայն մէզը և արական սերմը դուրս թափելու կը ծառայէ. այս խողովակը շրջապատուած է երակներու մասնաւոր հիւսուածով մը, որու պղտիկ խցիկները արեամբ լեցուելով՝ նա կարծը ու կանգուն վիճակ մը կրնայ առնել այս երեսյթը ունէ սեռային գրգռման ժամանակ կրնայ պատահիլ։ Առանդամի ծայրը շատ զգայուն և փափուկ հիւսուածներէ շինուած ըլլալուն պատճառաւ ի բնէ մորթի ծալքով մը (prepuce) պահովանուած է, հոն կը

գտնուին նաև հարիւրաւոր պղտիկ գեղձեր, որոնցմէ շարունակ ճերմակ նիւթ մը կ'արտադրուի, այս պատճառաւ առանդամը ամէն օր մաքրուիլ կը պահանջէ բոլոր պատանիներ այս մաքրութեան մասնաւոր խընամք տանիլը կանուխէն պէտք է սորվին, քանզի հոն հաւաքուած անմաքրութիւնը՝ յաճախ բորբոքում ու քերուիլ կը պատճառէ և այսպէսով զանոնք մոլութեան մը կրնայ ենթարկել, որու մասին քիչ վերջը պիտի խօսինք: Վերոյիշեալ մորթի ծալքը՝ առանդամի կարեսը մի մասը կը կազմէր այն ատեն, երբ մեր նախահայրերը վայրենի վիճակի մը մէջ բոլորովին մերկ կը պտտէին. այժմ մեր բոլոր մարմինը հագուստներով պաշտպանուած ըլլալով՝ այս մորթի ծալքին թլփատման գործողութեամբ վերցուիլը, շատ մը դժուարութեանց առջելը կրնայ առնել:

Ա. Մործիգները՝ և առանդամը՝ երկու երեք միլիմէթր լայնութիւն ունեցող բարակ խողովակներով իրարու կցուած են: Այս խողովակները սերմի խողովակներ (vas) կը կոչուին և ամործիգներու վերի ծալքէն ծագում առնելով՝ անոնց կողին վրայ կրկին և կրկին կը գալարուին և էրիտիտիմիս (epididymis) ըսուած պղտիկ գունտը կը գոյացնեն: Այս գալսրումները եթէ բացուելու ըլլան սերմի խողովակներու երկայնութիւնը քսան ոտնաչափի կը հասնի. ասոնք գէպի վեր երկրնալով որովայնին մէջ կը մտնեն և մէզի սմանին ճիշդներքեւը գտնուող զոյգ մը պարկերու մէջ կը վերջաւորուին, որոնք սերմամաններ կը կոչուին: Սերմամաններն ալ իրենց կարդին մէյ մէկ կարճ խողովակներով առանդամի խողովակին ետեի մասը կը բացուին: Այս կերպով բոլոր ծննդական գործարաններու կազմը, այ-



Նօ 5


1. Արական անդամը: 2. Մէզի խողովակը: 3. Բիւպիսի ոսկորը: 4. Մէզի ամանը: 5. Երիկամունքը: 6. Գառլերեան գեղձը: 7. Պրոստատի գեղձը: 8. Սերմամանը: 9. Սերմի խողովակը (vas): 10. Ամործիգը: 11. Երիկամունքի մէզի խողովակը: 12. Էրիտիտիմիս (Epididymis): 13. Ցայտեցուցիչ խողովակը (Ejaculatory duct): 14. Առթի ծալքը (prepuce).

սինքն ամործիգները, սերմամանները և առանդամը խողովակներով իրարու կցուած են: Կարծեմ հիմա կը բնաս հասկնալ թէ սերմը՝ որ կը պատրաստուի ամործիգներու մէջ, ինչպէ՞ս առանդամի խողովակէն դուրս կը բնայ գալ: Թերեւս քեզի համար անհասկնալի կը մնայ սա կէտը՝ թէ սերմը ինչպէ՞ս ամործիգներէն դէպի վեր կը բնայ վազել: Սերմի խողովակներուն ներսի կողմը մազային բջիջներէ (ciliary epithelium) կազմուած հիւսուածով մը ծածկուած է, այս բջիջներու վրայ շատ բարակ մազանման թելեր կան, որոնք դէպի վեր մշտնջենական շարժման մէջ են ու սերմը միշտ դէպի վեր կը թիավարեն: Կայ նաև ուրիշ պատճառ մը, եթէ ուշադրութիւն ըրած ես քու տոսլրակդ իր մէջի ամործիգներով, ըոպէն չորս հինգ անգամ վեր վարդանդաղ շարժում մը ունի, այս շարժումը գիշեր ցորեկ կը շարունակէ մինչեւ կեանքիդ վերջը. ահաւասիկ այս շարժումն ալ սերմը դէպի վեր քշելու կը նպաստէ:


Հոս կ'արժէ յիշել նաեւ ծննդական կազմի պատկանող ուրիշ երկու գեղձերը, որոնք նուազ կարեւոր չեն: Ասոնց առաջինը Պրօստատն (Prostate) է. ասիկա շագանակի ձեւ ու մեծութեամբ գլխաւորաբար մսաններէ կազմուած գեղձ մըն է, որ սերմամաններու եւ մէզի ամանին մէջտեղը կը գտնուի. թէ սերմամաններու և թէ մէզի խողովակները այս գեղձի մէջէն անցնելու ժամանակ զիրար կը խաչածեւէն եւ իրարու կը միանան, ինչպէս որ կը տեսնուի պատկերին մէջ: Սերմամաններու կարճ խողովակը՝ որ պրօստատի մէջէն կ'անցնի կը կոչուի « ցայտեցուցիչ խողովակ » (ejaculatory duct) և կարեւոր դեր մ'ունի. հոս կը գտնուին սեռային ջիղերը, որոնց վրայէն սերմի անցքը՝ սեռա-

յին հաճոյքը կը պատճառէ։ Պրոստատը կ'արտադրէ իւրեն յատուկ հեղուկ մը՝ որ սերմի թափուած ժամանակը՝ տասնեակ մը պղտիկ անցքերէ դուրս վազելով կը խառնուի սերմի հետ, այս գեղձը իր մէջի մսաններուն օգնութեամբ կծկուելու յատկութիւն մըն ալ ունի որով սերմը ուժով դուրս ցայտեցնել կարելի կ'ըլլայ։ Կը տեսնէք որ պրոստատը շատ բաղադրեալ գործիք մըն է, հետեւաբար անոր հիւանդութիւններն ալ շատ կարեւոր ու բաղադրեալ են, ջերմամիզութեան միքրոպները այս գեղձի բաղադրեալ հիւսուածներուն մէջ եթէ անգամ մը զետեղուին, ապաքինումը շատ դժուար կ'ըլլայ, երբեմն ալ հոն դժնուող սեռային ջիղերու խանգարման պատճառ ըլլալով՝ մարդու արական զգացումները կը տկարացնեն։

Երկրորդ՝ կայ ուրիշ սիսեռի մեծութեամբ գեղձ մը որ կը գտնուի ճիշդ պրոստատի առջեւը և կը կոչուի Կառլիֆերեան գեղձ (Cowper's gland) այս ալ նոյնպէս իրեն յատուկ թափանցիկ և լպրծուն հեղուկ մը կ'արտադրէ, այս հեղուկը սեռային գրգռման ժամանակ մէզի խողովակին մէջ կը թափուի ու սերմի վազելէն առաջ ճամբան կը պատրաստէ։ Այս գեղձէն արտադրուած հեղուկը պատանիներու մէջ շատ անգամ մեծ շփոթութեանց պատճառ տուած է, շատեր անիկա հիւանդութիւն մը կամ սերմահոսութիւն կարծելով մտահոգ եղած են։ մինչդեռ անիկա ու է սեռային գրգռման ժամանակ արտադրուող բնական հեղուկ մըն է։




## ՍԵՐՄԸ ԵՒ ՄԱՂՄԱՅԻՆ ԲԶԻՉՆԵՐԸ



Սերմը՝ որ կը պատրաստուի ամործիգներու մէջ, կէս թափանցիկ ճերմակ հեղուկ մըն է և իր մէջ կը պարունակէ միլիօնառոր արական սաղմային բջիջներ. այս հեղուկը օձապտոյտ սերմային խողովակներու մէջէն երկար ճամբորդութիւն մը ընեցէ վերջ, սերմամաններու մէջ կը հաւաքուի. անիկա մարդկային մարմինի մէջ արտադրուած ամենաթանկագին հեղուկն է:

Արական սաղմային բջիջները աչքով տեսնելու համար շատ փոքր են. խոշորացոյցին տակը հարիւր անգամ մեծցնել պէտք է. իսկ իգական սաղմային բջիջը համեմատաբար շատ մեծ է, արականին գոնէ երեք հարիւր անգամը մեծ՝ անշարժ ու կլոր և պարզ աչքով տեսանելի է: Բոլոր կենդանիներու սաղմային բջիջները հիմնապէս իրարու յար և նման են: Այնպէս որ մողէսի մը, ձիու մը և մարդու մը արական սաղմային բջիջները գրեթէ նոյն բաներ են. անոնք ձեւով ճիշդ գորտի նորածին ծագուկներուն կը նմանին, զորս գարնան ժամանակ կայուն ջուրերու մէջ յաճախ տեսած ըլլալու ես: Ասոնք ունին ձուածեղլուխ մը ու երկայն պոչ մը, որու միջոցաւ շատ արագ շարժումներ կ'ընեն: Այնպէս հաշուըւած է որ չափահաս մարդու մը մէկ անգամին թափուած սերմին մէջ այս սաղմային բջիջներէ երեսուն միլիօններ կը գտնուին: Ասոնց ամէն մէկը մարդ մը յառաջ բերելու կարողութիւնը ունի, եթէ նոյն թիւով իգա-

կան բջիջներ գտնել կարելի ըլլար. բայց բնդհանրապէս արգանդին մէջ մինակ մէկ հատ իգական բջիջ կը գտնուի և այս երեսուն միլիոնէն լոկ մէկ հատը այս իգական բջիջը գտնելով՝ անոր մէջը թափանցելու եւ մարդ մը կազմելու հաւանականութիւնն ու բաղդը կրնայ ունենալ. իսկ մնացածները կ'ոչնչանան :



Ն. 6

1. Նապաստակի սաղմային բջիջները
2. Կապիկներու սաղմային բջիջները
3. Մարդկային սաղմային բջիջները  
500 անգամ մեծցուած



Ն. 7

- Պատիկ կաթիլ մը սերմ  
խոչորացոյցին տակ  
100 անգամ մածցուած

Բնութեան կարգադրութիւնները որքա՞ն զարմանալի են. մէկ հատ մարդկային կեանք պատրաստելու լոկ կարելիութեան համար երեսուն միլիոն բջիջներ կը զոհուին : Բնութեան մէջ միշտ այսպէս եղած է. թուով քիչ եղող իգական բջիջներու արգառաւորումը կատարեալ ապահովութեան տակ առնելու համար, արական տարրը՝ ու սերմը անհաւատալի առատութեամբ կը հայթայթուի : Բոյսերու մէջ այսպէս է. արական փոշինե-

ըր այնչափ առատ կը պատրաստուին որ ոչ թէ միլի-  
օններ, այլ միլիարներ անոնց թուոյն տոջեւ աննշան  
թիւեր կը մնան։ Դարնան ժամանակ բոլոր մթնոլորտը  
անոնցմով լեփ լեցուն կ'ըլլայ։ Միջատներու դասակար-  
գին մէջ կան ընտանիքներ, որոնց մէկ իգականին հա-  
մար հարիւրաւոր արականներ կը գտնուին, որպէսզի  
բոլոր էգերու արգասաւորումը ապահովուած ըլլայ։  
այս տեսակին, քեզի շատ ծանօթ եղող մժեղները՝ լաւ  
օրինակ մը կրնան ըլլալ։

Սաղմալին բջիջներու ծագումը ուղղակի ամոր-  
ձիգներն են, բայց սերմի հեղուկ մասը, չորս տարբեր  
տեղերէ կ'արտադրուի — ամորձիգներէ, սերմամաններէ  
պրոստատ և դառնարերեան գեղձերէ։ Սերմամաններու  
մէջ հաւաքուած սերմը եթէ մի քանի օրեր հոն սպա-  
սելու պատեհութիւնը ունենայ, իր պարունակած թան-  
կագին հիւթերէ մեծ մասը կրկին մազային երակներու  
միջոցաւ կը ծծուին ու մարդուն արեան մէջը կը խառ-  
նուին։ Այնպէս որ մարդկային սերմի, կանոնաւոր ժա-  
մանակամիջոցներով և բնական կերպով թափուելուն՝  
կամ շուտ շուտ և անբնական կերպով դուրս թափուե-  
լուն մէջայո մեծ տարբերութիւնը կայ որ առաջինը՝ ժա-  
մանակ կու տայ, սրպէսզի բնութիւնը կրկին ծծէ սեր-  
մի թանկագին մասերը ու օգտագործէ զանոնք մարմնի  
զարգացման համար։ իսկ երկրորդը՝ մեր մարմնոյն հա-  
մար շատ կարեւոր եղող կենսական հեղուկները արագ  
արագ կը մսխէ առ ոչինչ։

Մարդկութիւնը բոլոր դարերու մէջ, միշտ զար-  
մանալի բաներու ետեւէ եղած է։ Հին աղգերը ունէին  
իրենց եօթը զարմանալիքները։ Նոր աշխարհը ունի իր  
եօթն անգամ եօթը և աւելի՝ մեծ զարմանալիքները։  
բայց մենք այն համոզումը ունինք որ աշխարհիս մէջ,

ամենազարմանալի միակ բանը այս արական կամ իդական սաղմային քջիջներն են։ Այս միաբջիջ շատ փոքրիկ արարածը որ ինքնին այնչափ պարզ ու չնչին բան մը կ'երևի, ունի իր մէջ այնպիսի թագուն կարողութիւն մը, որով ինքունքը կընայ վերածել մարդ էակի մը, թերևս հանճարի մը որ անհունապէս բաղադրեալ է ամէն տեսակէտով։ Բացի աստի, ալ աւելի զարմանալի է խորհիլ՝ որ այս փոքրիկ արարածը իր գոյութեան մէջ կը պարփակէ, իր հայրերուն, իր մամարուն, ու իր նախահայրերուն բոլոր կարողութիւնն, սովորութիւնն ու միտումները, զորս կը տանի իր հետը և կուտայ նորածին անհատի իրրե աւանդ։ այս յատկութիւնները բարի կամ յոռի նորածին անհատի կեանքին մէջ անպատճառ երեան պիտի գան։

—————♦————

## ԱՄՈՐՁԻԳՆԵՐՈՒ ՆԵՐՔԻՆ ԱՆՇԱՆՈՑ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

~~~~~

Մեր մարմնոյն մէջ տարբեր տեղեր զետեղուած տասնեակ մը փոքր ու մեծ զեղձեր կան, որոնց ամէն մէկը իր մէջը՝ կը պատրաստէ ներքին արտադրութիւն մը որ դուրս չվագէր, այլ ուղղակի մարդուս արեան մէջ կը խառնուի. այս զեղձերէ մեծամասնութիւնը՝ դուրսի հետ ունէ հաղորդակցութեան համար ելք մը կամ անցք մըչունին. զորօրինակ սիւֆրաբէնալ (suprarenal), թհայրօյտ (thyroid), թէթուիթէրի (pituitary) զեղձերը որոնք մինակ ներքին արտադրութիւն ունին. բայց կան ա-

նոնցմէ մի քանի հատեր, ինչպէս լեարդը և պանկրէասը (pancreas), որոնք արտաքին աշխարհի հետ կապուած են մասնաւոր ելքով մը. ունին թէ ներքին ու թէ արտաքին արտադրութիւններ, որոնց առաջինը՝ ուղղակի մոր արեան կը խառնուի, իսկ երկրորդը դուրս կը թափուի:

Գիտական յառաջդիմութեանց վերջին տարիներուն մէջ հաստատուած իրողութիւն մըն է որ, մեր մտային, ֆիզիքական և հոգեբանական զարդացում ու գործունէութիւնը՝ լոկ այս ներքին արտադրութեանց կը պարտինք ու առանց անոնց մեզի համար չիկայ կեանք: Այս գեղձերէ ունէ մէկուն խանդարումը մազի համար ուրոյն մահացու հիւանդութիւն մը կը նշանակէ: Թէե այս գեղձերու ներքին արտադրութիւնները՝ իբրև դեղ, կենդանիներու միւնոյն գեղձերէն շատ դիւրութեամբ կը հանուին ու զարմանալի յաջողութեամբ կը գործածուին շատ մը հիւանդութիւնները բուժելու համար: բայց անոնց ինչ ըլլալը, անոնց քիմիական բաղադրութիւնները, դեռ գիտութեան ծանօթ չեն ու թերևս շատ տարիներ անոնք մեզի գաղտնիք մը պիտի մնան: Այս ամէն տեսակ ներքին արտադրութիւնները Հորմոններ (Hormones) կը կոչուին: Այս վերջին տարիներու ընթացքին այնպէս հասկցուած է որ մարդոց բնութիւնները՝ պաղարիւնութիւն, զգայնութիւն, քաջութիւն, վախկոտութիւն, խոհունութիւն, հեռատեսութիւն ևայլն հիմնապէս այս գեղձերու ներքին արտադրութեանց արդիւնքներն են: Շատ մը հանճարներ այս ներքին հորմոններու միջոցաւ ծագում առած են: Նաբոլէօնը՝ Նաբոլէօնը՝ այս գեղձերէ մի քանի հատերուն արտասովոր մէծութիւնը ու հետեաբար անոնց հորմաններուն առա-


տութիւնը եղած է :

Ամորձիգներն ալ՝ այս զեղձերու դասակարգին կը պատկանին . ունին երկու տեսակ արտադրութիւն , մէկը արտաքին որ իրբե սերմ դուրս կ'ուգայ , միւսը՝ ներքին որ շատ կենսական հորմոն մը մեր արեան մէջ կը խառնէ : Եթէ մանրէացոյցով ամորձիգներու հիւսուածները քննուի կը տեսնուի որ նա կը բաղկանայ երկու իրարմէ տարբեր մասերէ . առաջին մասը կը պատրաստէ ծանօթ սերմը , երկրորդ մասը կը բաղկանայ մասնաւոր բջիջներու խմբակներէ , որոնք գտնողին անունովը Լեյտիկեան կղզիներ կը կոչուին . ահաւասիկ ասոնք կ'արտադրեն այս անծանօթ ներքին հորմոնը՝ որ մեզի համար խիստ կենսական է : Դիտութեան այս նոր ճիւղին մասնագէտները մեզի կը հաղորդեն որ ամորձիգներու հորմոնը մեր մարմնոյն ուրիշ բոլոր հորմոններու թագաւորն է . անոնց ներդաշնակ գործակցութիւնը՝ ամորձիգներու հորմոնով կարելի եղած է . նոյն իսկ ամորձիգները՝ սերմ պատրաստելու մզողը ու պատանիի մը մարմնոյն մէջ արբունքի մեծ յեղաշրջումը առթող ոյժը այս հորմոնն է :

Պղտիկ տղաքը իրենց յատուկ միտումներ ունին , որոնք շատ անգամ մեր ուշադրութիւնը կը գրաւեն . անոնք՝ միշտ մեծնալու չափահաս մարդիկ ըլլալու համար սաստիկ փափաք մը ունին , եթէ իրենց տարիքը հարցնես , միշտ մի քանի տարի աւելի խօսելու կը փորձուին . կը սիրեն միշտ իրենք զիբենք զօրաւոր ցուցնելու մեծ մեծ ջարդել , կ'ուզեն ամէն հանդիպողին հետ գոտեմարտիլ ու յաղթել : Իրեն եթէ հարցնես ա զագային ի՞նչ կը փափաքիս ըլլալ , նա կը նախընտրէ ըլլալ կառապան , ջորեպան , շօֆէօր կամ զինուոր . կը փա-

փաքի այնպիսի արհեստներ որոնք ոյժ ու քաջութիւն կը պահանջեն։ Ահաւասիկ պղտիկ տղոց մէջ մեծնալու, զօրաւոր ըլլալու ի բնէ գրուած անյագ փափաքի հիմնական շարժառիթը՝ ամործիգներու այս ներքին անծանօթ արտադրութեան մէջ պէտք է փնտռել, ան է որ կը խօսեցնէ պղտիկ մանկան թոթովուն լեզուն։ Քիչ վերջը կը հասնի արբունքը, կը պատահի այդ մեծ յեղաշրջումը և այդ մանկական գաղափարականները կ'իրականանան, նա կ'ըլլայ զօրաւոր, նա կ'ըլլայ քաջ. վերջապէս նա կը դառնայ այր մարդ մը բառին բուն նշանակութեամբ։ Դուն կեանքիդ բոլոր ելեէջներուն մէջ այս հորմոնի կը կարօտիս. կեանքդ ու երջանկութիւնդ անոր կը պարտիս, մէկ խօսքով քեզ մարդ ընողը այս հորմոնն է, առանց անոր քու կեանքդ ձախողանք մը և դուն տկար և անօգուտ արարած մը պիտի ըլլայիր։

Հին ժամանակները մեծահարուստ թուրք պալատականներ սովորութիւն մը ունէին. խափչիկ գերիներու պղտիկ տղաքը կ'առնէին ու անոնց ամործիգները հանել տալով՝ իրենց կանանցներուն մէջ ցկեանս կը ծառայեցնէին իրեն չէզոքացած անվնաս մարդիկ։ Նոյնպէս միջնադարեան մոլեռանդ քրիստոնեանները իրենց մարմնի սեռային գործունէութիւնը մեղք և ամօթ նըկատելով՝ իրենք զիրենք, մինչև անգամ իրենց մանչերը յօժարակամ կը չէզոքացնէին։ Այս տեսակ մանուկներ մեծնալով խեղճ ու արգահատելի արարածներ կ'ըլլային։ Այսպիսիներ ընդհանրապէս կ'ունենան կանացի ձև ու ձան մը. կ'ունենան տկար մսաններ և բարակ ու դիւրաբեկ ոսկորներ. մօրուք ու պեխ չեն ունենար, ոյժն ու կորովը կը պակսի իրենց. մտքով տկար ու յետամընաց կ'ըլլան. այսպէսով մարդկային ընկերութեան ողորմելի ու ապիկար անդամները կը կազմեն։



## ԳԻՃՈՒԹԻՒՆԸ

Գիճութիւնը այն մոլութիւնն է որով արքունքի հասած պատանի մը կամ ուեւ մարդ մը իր մատերովը կամ ուրիշ միջոցներով կը շփէ ու կը գրգռէ իր առանդամը և անբնական կերպով իր սերմը դուրս կը թափէ։ Գիճութիւնը եթէ շատ կանուխէն սկսուի շատ անգամ սերմն իսկ դուրս չվազեր.քանզի դեռ վազելու չափ առատ սերմ չէ գոյացած, միայն ցնցումներ տեղի կ'ունենան. բայց շատ չանցած սերմը գալու կ'սկսի. քանզի բնութիւնը իր վրայ դրուած պահանջին համապատասխանելու ստիպուած է։

Այս յոռի ընթացքը ալ աւելի լուրջ հանգամանք մը կ'ստանայ այն ատեն՝ երբ ենթական երկայն ժամանակ նոյն գործողութիւնը կրկնելով՝ այս մոլութիւնը իրեն սովորութիւն մը կը դառնայ։ Արքունքի հասած պատանիի մը սերմամանները սերմով լեցուելու կ'սկսին. նա բնականաբար սիրային հեշտ մթնոլորտ մը կ'զգայ իր շուրջը, որ իրեն համար նոր և հաճոյալի է. եթէ նա իր միտքն ու սիրտը միշտ զբազեցնէ այս տեսակ խորհուրդ ու զգացումներով ու ինքզինքը թողու իբրև անկամք էակ մը այս զօրաւոր հոսանքին առջեւ, շատ դիւրութեամբ պիտի տարուի այս և ուրիշ մոլութեանց մէջը։ Սեռային այն ցոփ վէպերը որոնք պատանիներ այս տարիքին մէջ կարդալու սովորութիւնը ունին, սեռային զգացումները աւելի գրգռելու մէջ մեծ դեր մը

կը խաղան . այսպէսով ուղեղն ու հոգին քանի զբաղին այս հեշտ երեակայութիւններով , մարմինը կերպով մը կը համակերպի և կամայ ակամայ գիճութիւնը պատահւոյն անխուսափելի վտանգ մը կը դառնայ :

Գիճութիւնը մարդկային ցեղի մէջ , կարծուածէն շատ աւելի ընդհանրացած մոլութիւն մըն է . մինչեւ անգամ բարձրագոյն կենդանիներ այս զեղծումէ ազատ չեն մնացած . գոնէ կապիկներու մէջ այս մոլութիւնը յաճախ նշմարուած է : Այս մոլութիւնը պատմականօրէն շատ հին ըլլալով հանդերձ՝ տիեզերական մոլութիւն մը եղած է . այնպէս կը թուի թէ , մարդկային ցեղի գոյութեան սկիզբի օրէն անիկա սկսած է պղծելու անոր բարքն ու վարքը : Հին և նոր կտակարաններու մէջ այս մասին եղած ակնարկութիւններէ կը հասկցուի որ , Մովոէսի ժամանակ , և անկէ վերջը Հռովմայեցւոց ժամանակ այս մոլութիւնը շատ ընդհանրացած էր : Մենք այն համոզումը ունինք որ , մեր այժմու պատանեկութեան մէջ , այս մոլութեան քիչ շատ ենթակայ չեղող մէկը գրեթէ չիկայ . եթէ կայ , շատ պղտիկ փոքրամասնութիւն մ'է : Շատ ցաւալի իրողութիւն մըն է որ այս մոլութիւնը լոկ պատանիներու կամ երիտասարդներու յատուկ մոլութիւն մը չէ բնաւ , չափահասներու մէջ , մինչեւ անգամ ամուսնացած մարդոց մէջ անիկա կարծուածէն աւելի ընդհանուր է : Մենք ճանչցած ենք վաթսունըերկու տարեկան ամուրի ծերուկ մը որ այս մոլութեան գերին էր տակաւին : Այս խնդիրը արդէն լուրջ նկատողութեան առնելու խնդիր մը ըլլալովը հանդերձ՝ համաշխարհային պատերազմէ վերջ աւելի լուրջ հանգամանք մը ստացած է , քանզի մեծ թափեր առած անբարոյականութեանց շարքին մէջ , այս մոլու-

թիւնն աւ իր կարեոր բաժինը ունեցած է :

Այս մոլութեան այսչափ ընդհանրացումը ունի իր մասնաւոր պատճառները — Անոր մէջ հաճոյք մը կայ, որուն ցաւալի հետեանքները կամ ըստ արժանւոյն չեն գիտցուիր կամ կ'անտեսուին : Անոր հետեանքներուն միակ պատասխանառուն անհատը ինքն է . ինքն է որ կը վնասուի ու ուրիշին վնաս մը չհասնիր, այսպէսով իրաւունքի խնդիր մը գոյութիւն չունի : Ընկերային կանոնները այս մոլութեան դէմ պատիժ մը չեն տրամադրեր, քանզի իրաւունքի բոնաբարում չիկայ : Անհատներ այս ապօրինի գործողութիւնը կատարելու համար գաղտնի տեղեր գտնելու դժուարութիւն չեն ունենալ :

Պատանիներ շատ անգամ այս մոլութեան մէջ անգիտակցաբար կ'իյնան, անոր վնասակար բան մը ըլլալը չեն գիտեր, չեն կրնար ըմբռնել որ ամէն տեսակէտով սկիտի տուժեն ու շատ չանցած այս գէշ սովորութեան գերին պիտի ըլլան : Մինչև անգամ գտնըուած են երիտասարդներ, որոնք այս մոլութիւնը շարունակած են իրեւ օգտակար մի բան : Այս յոռի ընթացքը անգամ մը սկսուելէն վերջը շատ դիւրութեամբ ծայրայեղութեանց կը տարուի, ճանչցած ենք պատանիներ որ մէկ օրուան ընթացքին այնչափ անգամներ այս անպատկառ գործողութիւնը կատարած են, որ վերջապէս սերմի տեղ արիւն վազելը տեսնելով դադրեցուցած են :

Պատանիներ գիճութիւնը շատ կերպերով կրնան սորվիլ . յաճախ շատ կակուղ ու թանձր անկողիններու պատճառաւ յառաջ եկած չափէն աւելի ջերմութիւնը՝ առանգամին մէջ արեան խոնում՝ հետեաբար սեռային

գրգռում կը պատճառէ . այս կերպով գրգռուած առանցամից վերմակներու քսուելովը պատանին անծանօթհաճոյք մը կ'զգայ , կը շարունակէ այս չփումը քիչ վերջը ձեռքերը օգնութեան կը հասնին և ահա գիճութեան առաջին գործողութիւնը կատարուած է : Պիսիքլէթ և ձի հեծնելու ժամանակ , երբեմն ալ ծառերը մարդցելու ժամանակ ծննդական գործարաններու վրայ եկած ճնշում ու չփումէ յառաջ եկած նոյն գրգռումը՝ նոյն կերպով պատանիները այս փորձութեան կրնայ մղել : Երբեմն անմաքրութեան պատճառաւ առանդամի մորթի ծալքին տակը հաւաքուած ճերմակ արտադրութիւնը՝ հոն բորբոքում հետեւաբար քերուիլ յառաջ կը բերէ , այս կերպով պատանին այդ վայրը քերելու ստիպուելով գիճութիւնը դիւրաւ կրնայ սորվիլ : Պատանիները այս բոլոր պարագաներու տակ պէտք է ուշիւով հսկուին ու խնամուին :

Իրողութիւն մ'է որ գիճութիւնը վերոյիշեալ և ուրիշ անմեղ միջոցներով նոր սերնդեան մէջ մուտք կրնան գտնել . բայց մենք այն համոզումը ունինք որ մեր տղոց հարիւրին իննըսունը այս մոլութիւնը գիտակցաբար իրարմէ կը սորվին . և շատ ցաւով տեսած ենք որ գիճութեան ամենագլխաւոր կեղրոնները մեր գպրոցները եղած են , քանզի հոն պատանիներու բազմութիւն մը կայ որոնք միշտ իրարու հետ չփման մէջ են , որոնց մէջ տասը տասնըմէկ տարեկան տղոց այս մոլութեան գերի ըլլալը տեսնել մարդուս անհաւատալի կ'ուգայ . այս մոլութիւնը համաճարակի մը պէս մեր նոր սերունդը վարակած է :

Դպրոցական պատանիներէ վերջը կուգան արհեստաւոր տղաք . անոնց մէջն ալ այս մոլութիւնը քիչ

Ֆաւալ գտած չէ. կան արհեստներ, ինչպէս գերձակութիւն ու կօշկակարութիւն որ աւելի առիթ ընծայած են այս մոլութեան տարածման. մինչև իրիկուն ոտք ոտքի վրայ կամ ոտքերը իրարու քով՝ տաքուկ աթոռներու վրայ նստած աշխատիլ, բնականապէս ծննդական գործարաններու մէջ արեան խոնում մը յառաջ կը բերէ որ առանդամի գրգոման պատճառ կ'ըլլայ ու այս կերպով պատանին շատ դիւրութեամբ գիճութեան կը տարուի:

Այս առթիւ պարտինք նաև յիշել ուրիշ անպատեհութիւն մը. կան ընտանիքներ որ մէկէ աւելի տղաքը նոյն անկողնի մէջ պառկեցնելու սովորութիւնը ունին. այս սովորութիւնը թէ բարոյական և թէ ֆիզիքական տեսակէտներէ առողջապահական չէ բնաւ. գիճութեամբ բոնուած պատանի մը իր հետը շփման մէջ գտնուող իր քոլոր հասակակիցները շատ դիւրաւ կրնայ թունաւորել. ահա այս սովորութիւնն ալ գիճութեան տարածման առիթ ընծայած է:


Մենք իրեն բժիշկ գիճութիւնը առաջին անգամ իրեն մոլութիւն մը կը նկատենք. քիչ յետոյ երբոր այն սովորութիւն դառնայ կը նկատենք զայն իրեն հիւանդութիւն մը որ դարմանում կը պահանջէ. գիճութիւնը շատ գէշ ձեւ մը կ'առնէ այն ատեն երբ անիկա արմատացած սովորութիւն մը ըլլայ ու ենթական անոր գերին ըլլայ: Ճշմարտապէս խօսելով տարիներով ինք-զինքը այս յոոի ընթացքին տուած երիտասարդ մը հիւանդ մ'է մարմնով, հիւանդ մ'է մտքով, հիւանդ մ'է հոգւով. ուստի թէ մեր դպրոցներու, թէ մեր արհեստանոցներու և թէ մեր ընտանիքներու մէջ այս մասին մեր պատանիներու վիճակը պէտք է որ մեզ

հետաքրքրէ խորապէս։ Անոնք այս հիւանդութեամբ չվարակուած պէտք է դարմանուին, այսինքն նախազգուշական միջոցներ պէտք է ձեռք առնուին։ Անոնք որ արդէն վարակուած են այս ախտէն պէտք է դարմանուին ֆիզիքապէս և բարոյապէս։

Եթէ ի բնէ գիճութեամբ դուրս թափուած սերմը արիւն եղած ըլլար, կարծեմ ոչ ոք պիտի համարձակէր շալունակելու այս յոռի ընթացքը։ Դուն պէտք է լաւ համոզուիս որ ամէն անգամին անբնական կերպով թափուած այս հեղուկը քու զուտ արիւնէդ շատ աւելի թանկագին հեղուկ մըն է։ Բնական ժամանակամիջոցներու մէջ ու բնական կերպով տեղի ունեցող սերմահոսութիւններ վնասակար չեն ըլլար, քանզի սերմամաններու մէջ ժամանակ մը մնացող սերմի թանկագին մասերը կրկին կը ծծուին ու արեանդ մէջ կը խառնըւին։ Այս մոլութեան պատասխանատուն թէեւ անհատը ինքն է, բայց բարոյական կէտ մը կայ, զոր լրջօրէն պարտիս նկատողութեան առնել, ինչպէս որ ուրիշ մէկը քեզի անիրաւութիւն մը ընելու կամ վնաս մը հասցնելու իրաւունք չունի, նոյնպէս եւ դուն զքեզ չարաչար գործածելու կամ դուն քեզի վնասելու իրաւունք չունիս, քանզի քու մարմինդ քուկդ չէ այլ (Աստուծոյ տաճարն է)։ Մարդասպանութիւնը անձնասպանութեան չափ և անոր պէս բարոյական մեղք մըն է։ Դուն որչափ ալ առողջ ու ուժով ըլլաս, քու ուժդ ու առողջութիւնդ ունի իր սահմանը, եթէ զայն շռայլաբար վատնես, նա կը լմնայ ժամանակէն առաջ։ Նոյնպէս սերմդ ունի իր սահմանը ու չափը, եթէ զայն շռայլաբար վատնես ան ալ ժամանակէն առաջ կը հատնի. առածը կ'ըսէ «մոմը մի վառեր երկու ծայրե-

բէն նա շուտ կը հատնի» :

Դուն որ այս տողերը կը կարդաս, կրնայ ըլլալ  
որ այս մոլութեամբ վարակուած ես, այս վայրկեանիս  
պէտք է լաւ համոզուիս որ գիճութիւնը՝ մասնաւորա-  
պէս սովորութիւն դարձած գիճութիւնը քեզի համար  
ամէն տեսակէտով վնասարեր է։ Կրնայ ըլլալ որ անոր  
վնասները չես զգար, քանզի բնութիւնը քու պատանի  
մարմինդ անհուն ուժերով օժտած է։ բայց մի վստա-  
հիր ուժերուդ, եթէ շարունակես այս յոռի ընթացքը,  
հեռու չէ այն ժամանակը երբ խորապէս պիտի զգաս  
անոր վնասները։ Այսու ամենայնիւ պէտք չէ յուսահա-  
տիս, քեզի համար ուշ չէ տակաւին, թերեւս դուն քու  
մարմնոյդ մէջ պահուած այդ զարմանալի կենսունա-  
կութեան մասին լաւ գաղափար մը չունիս. այս կեն-  
սունակութիւնը շատ աւերներ կրնայ նորոգել, շատ հի-  
ւանդութիւններ կրնայ բժշկել. այս մոլութիւնը քեզի  
վնասներ հասցուցած կրնայ ըլլալ. բայց եթէ անմիջա-  
պէս ձգես այս գէշ սովորութիւնը, բնութիւնը՝ քու  
խանգարուած առողջութիւնդ անհաւատալի արագու-  
թեամբ մը պիտի նորոգէ ու շինէ և վստահաբար կրկին  
պիտի վայելես պատանեկան կեանքդ ու առողջութիւնդ։



## ԳԻՃՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ



Այս մասին նշանաւոր հեղինակներ ծայրայեղ ար-  
տայայտութիւններ ըրած են. այս նպատակով գրուած  
գիրքեր կան որոնք գիճութեան հետեւանքները այնչափ

սարսափելի նկարագրած են և այնչափ անբուժելի հիւանդութիւններ անոր վերագրած են, որ այս գիրքերը կարդացող երիտասարդներ անոնցմէ օգտուելու տեղ վնասուած են. քանզի իրենք զիրենք կարգ մը անբուժելի հիւանդութեանց ենթարկուած կարծելով ահ ու դողի մատնուած են ու իրենց մէջ ապրելու փափաքը մարելով՝ մինչև անգամ անձնասպանութեան դիմելու չափ յուսահատ եղած են: Միւս կողմէ կանհեղինակներ որ գիճութիւնը՝ բնական սեռային յարաբերութենէ տարբեր բան մը չեն նկատած ու անոր վնասները շատ սահմանափակ կերպով նկարագրած են: Մենք այս մասին ծայրայեղութիւններէ զգուշանալով հանդերձ՝ իրողութիւններն ալ պարզելու չպիտի թերանանք:

Արդէն դուն քիչ առաջ սորվեցար որ այս զգացումը ինքնին բնականոն զգացում մըն է և պէտք է բնական կերպով գործածուի, անոր չարաչար գործածումն է որ քեզի համար աղէտարեր կընայ ըլլալ: Այս մասին ըսուած բաները պէտք է որ պաղարիւնութեամբ առնես. անոնց մասին սարսափահար ըլլալու պատճառ մը չունիս. Երբեք քեզ վախցնել չենք փափաքիր, այլ պարզ իրողութիւնները աչքիդ առջեւ բերելով մտքիդ մէջ համոզում մը գոյացնել կ'ուզենք:

Ցաւալի իրողութիւն մըն է որ ոեռային զգացումներուդ զարթնումը՝ հետեաբար անոնց չարաչար գործածման վտանգը՝ կը զուգադիպի այնպիսի ժամանակամիջոցի մը, երբ ու ոսկորներդ, մսաններդ ու ջիղերդ արագ արագ զարգանալու սկսած են. այս ժամանակին մէջ կեանքիդ ու է ժամանակէն աւելի, սնընդարար սուատ կերակուրներու, մարզանք ու մաքուր օդի պէտք ունիս, ուստի պարտիս լաւ ըմբռնել որ

այսպիսի կարեւոր ժամանակի մը մէջ, զինութեամբ  
քու մարմնիդ ամենաթանկագին հիւթերը կորսնցնելով  
բնականաբար մարմինդ կը զրկես անոնցմէ ու անոր  
ֆիզիքական զարգացումը կը յետաձգես։ Հետեւաբար  
զինութիւնը քու մարմնոյդ մէջ յառաջ կը բերէ արեան  
նուազում, ընդհանուր տկարութիւն։ Նոյն ժամանակ  
ջիղերդ ու մսաններդ կը կորսնցնեն իրենց տոկունու-  
թիւնը, գործունէութիւնն ու ծաւալը ինչ որ աւ ըլլայ,  
զինութիւն ընող պատանի մը չի կրնար մեծնալ ու  
զարգանալ ինչպէս որ պէտք է։ Քիչ չեն թիւերը այն  
երիտասարդներուն որոնք իրենց այս զարգացման ու  
բողբոջման ժամանակը՝ այս ապօրինի սովորութեամբ  
կը փացնեն ու իրենց բոլոր կեանքին մէջ փոքրահա-  
սակ և տկարակազմ մնալու կը դատապարտուին։

Փորձառու բժիշկներ իրենց ներկայացող այս տե-  
սակէն հիւանդ պատանիները՝ իրենց հասարակ վիճա-  
կէն շուտով կրնան հասկնալ։ Այս մոլութեան գերի մէ-  
կը շատ բաներէ կրնայ գանգատիլ։ զիսու ցաւ ու պը-  
տոյտկ'ունենայ, սիրու կը տրոփիէ, ուժաթափ է, ձեռ-  
քերը և ոտքերը պաղ են, որ կենսական յոգնածութիւն  
կը նշանակէ։ նա շատ անգամ գետին կը նայի ու ոչ-  
խարային բնոյթ մը կ'ունենայ։ հարցումներուդ շուտ  
չի պատասխաներ, քանզի ուղեղը բնականոն վիճակի  
մը մէջ չէ։ զիշերները իր քունը խաղաղ և անվրդով  
չէ, յաճախակի զիշերային հոսումներ ալ կ'ունենայ։ Ա-  
հաւասիկ նկարագրութիւնը երիտասարդի մը որ երկար  
ժամանակ զինութեան գերի եղած է։

Այս գէշ սովորութիւնը տղոց մէջ անհաճոյ մի-  
տումներ ալ յառաջ կը բերէ։ Այսպիսիներ ընդհանրա-  
պէս մենակեաց ապրելէ կ'ախորժին։ ընկերային յարա-

բերութիւններէ ետ կը կենան, քանզի անոնք իրենց համար հաճելի չեն թուիր. իրենց հասակակիցներէն, մինչև անգամ ընտանիքի անդամներէն հեռու կը կենան: Այս անհաճոյ միտումը երկու պատճառներ կրնայ ունենալ. առաջին՝ պատանին իր սրտին խորը սխալ բան մը ըրած ըլլալու գիտակցութիւնը ունի. այս զգացումը զինք ուրիշներէ հեռու կը պահէ. երկրորդ՝ այս անպատկառ գործողութեան համար գաղտնի տեղեր փնտոել կամաց կամաց իրեն սովորութիւն կը դառնայ ու այս կերպով մենակեաց ըլլալու կը դատապարտուի:

Սերմահոսումները միշտ ուժեղ ցնցումներով տեղի կ'ունենան. պէտք է սորվիս որ այս ցնցումներու ամենօրեայ կրկնումը քու փոքրիկ մարմնոյդ թարմ ջիղերուն համար շատ ծանր բեռ մ'է, ուստի շատ անգամ այս յոռի ընթացքէն ամէնէն առաջ տուժողը քու ջղային դրութիւնդ է. չափահաս մարդու մը կարծրացած ու տոկուն մարմինը՝ այս ցնցումներու կրնայ հանդուրժել, բայց դեռատի տղու մը թարմ հիւսուածներուն համար այս ճնշում ու ցնցումը մխասաբեր է: Այս պատճառով է որ առաջուանէ աւելի դիւրազրդիու ես, այս պատճառով է որ քունդ իր անուշութիւնը ու խաղաղութիւնը կորսնցուցած է, յիշողութիւնդ տկարացած է ու դասերդ առաջուան պէս արագ չես կրնար սորվիլ:

Գիճութեան գէշ հետեանքներէն մին ալ մշտական սերմահոսութիւնն է. սերմամաններու գոները բընութեան կողմէ շատ ամուր կերպով գոցուած են, ասոնք միայն ի հարկին բացուելով՝ իրենց մէջի սերմը դուրս կը ցայտեցնեն ու կրկին կը գոցուին. սովորութիւն դարձած գիճութիւնը այս բնական կարդադրութիւնը կը խանդարէ. այս դոները բացուելու համար

այնչափ շատ անգամներ կը զարնուին որ ալ կը թուլ-  
նան ու իրենց մեքենականութիւնը կը կորսնցնեն ու  
այսպէսով առօրեայ կեանքի մէջ, ժիղելու կամ բնա-  
կան պէտքը հոգալու համար կամ ուրիշ ո և է կերպով  
կատարուած պզուիկ ճնշում մը սերմը դուրս կը թափէ.  
այս հիւանդութիւնը լուրջ հիւանդութիւն մըն է և ան-  
միջական դարմանում կը պահանջէ. միայն թէ ասկէ  
առաջ յիշուած Գառւրերեան գեղձերէ արտադրուած  
հոսանքը, այս իրական սերմահոսութեան հետ պէտք չէ  
շփոթել ։ Ասոր համար բժիշկի քննութեան դիմել ամե-  
նաապահով ճամբան է :

Այս մոլութեան անուղղակի հետեանքներու մա-  
սին կ'արժէ նաև յիշել կէտ մը : — Իրողութիւն մըն է  
որ ասոր գերի եղած անհատ մը իր մարմնոյն բոլոր  
բջիջներուն կենսունակութիւնը կը տկարացնէ : Դուն  
արդէն սորված ես որ բոլոր արարածները իրենց ծնընդ-  
եան առաջին օրէն մինչեւ գերեզման, ամէն տեսակ  
ախտածին միքրոպներու դէմ պայքար կը մղեն : Այս  
պայքարին մէջ ան որ առողջ կենսունակութիւն մը ու-  
նի միշտ յաղթող է, այն որ տկար կենսունակութիւն  
մը ունի՝ միշտ յաղթուելու, այսինքն հիւանդանալու  
վտանգին մէջ է : Հոս պէտք է լաւ ըմբռնես որ այս  
գէշ սովորութիւնը քու կենսունակութեանդ ջերմաչափը  
միշտ վար, աւելի՝ վար իջեցնելու կը ծառայէ . այնպէս  
որ ո և է հիւանդութեան մը միքրոպները քու մարմնոյդ  
մէջ մտնելու առիթը եթէ ունենան, անոնք շատ դիւ-  
րութեամբ քու վրադ պիտի յաղթանակեն . քանզի ար-  
եանդ բջիջները պայքար մղելու համար պէտք եղած  
ոյժն ու կորովը չունին : Ուրեմն այս մոլութիւնը շա-  
րունակելով կեանքի գոյամարտին մէջ յաջողիւ քեզի  
համար շատ դժուար պիտի ըլլայ :

Մի՛ տկարացներ քու բոլոր բջիջներուդ կենսունակութիւնդ այս գէշ սովորութեամբ . աշխատէ զանոնք պահել կայտառ ու զօրաւոր ամէն հաւանականութեանց դէմ, որպէսզի առջեղ բայցուած կեանքի պայքարին մէջ, հարուածներդ ըլլան ուժգի'ն, հաստատեւ ազդու:

Գիճութեան ժառանգական հետեանքներն ալլուրջ ուշաղրութեան արժանի են: Քիչ առաջ խօսեցանք որ անհատի մը առնական կարողութիւնները սահմանափակ են. զանոնք որչափ շռայլաբար վատնես՝ այնչափ կարճ ժամանակամիջոցի մը մէջ կը վերջանան: Շատ մարդիկ այս կերպով իրենց առնական կարողութիւնները ժամանակէն շատ առաջ կը կորսընցընեն: Դժբախտաբար գիճութեան ու կնամոլութեան պատճառաւ երեսուն տարեկան հասակին մէջ ծերացած մարդիկ հաղուագիւտ չեն: Գիճութիւն ընող երիտասարդներ պէտք է լաւ ըմբռնեն որ եթէ այս յոռի ընթացքով իրենց սերմին ամենակենսունակ ու ամենաառողջ մասը իրենց կեանքին առաջին տարիներուն մէջ լմնցնեն, բնականաբար ամուսնանալէն վերջը իրենց տկարացած՝ ըսինք ծերացած սերմէն կայտառ ու առողջ սերունդ մը պէտք չէ ակնկալեն. այդպիսիները ընդհանրապէս կազմով և կենսունակութեամբ տկար զաւակներ կը ծնանին:

Բաց աստի, մենք ինչպէս որ մեր զաւակներուն իրեւ ժառանգ նիւթական հարստութիւններ կը թողունք, նոյնպէս և ա՛լ աւելի անխուսափելի կերպով անոնք մեզմէ վերջը կը ժառանգեն մեր միտում, նկարագիր ու սովորութիւնները: Գիճութեան վարժուած ծնողաց զաւակները ի բնէ պիտի ծնին նոյն միտումով

և նոյն սեռային փորձութեանց աւելի դիւրութեամբ պիտի իյնան։ Անշուշտ ձեզմէ ոչ ոք պիտի փափաքի ունենալ սերունդ մը որ տկար է ֆիզիքապէս ու բարոյապէս։ Ամուրի կեանքի մէջ ինքզինքը այս կերպով չարաչար գործածող պատանիներ պարտին լաւ գիտնալ որ վերջը ապագայ ամուսնական կեանքի բնականոն ու գաղափարական վայելքը պիտի չկարենան գտնել ու շատ անգամ ամուսնական կեանքէն դժգոհ պիտի մնան, քանզի գիճութիւնը իրենց սեռային զգացումները բթացուցած է։ Մի՛ զարմանաք երբոր ըսեմ ձեզի որ ամուսնական կեանքի մէջ պատահած ապերջանկութեանց ու ամուսնալուծումներու հիմնական պատճառներէն մին ալ այս մոլութեան մէջ պէտք է փնտռէք։

Անշուշտ գիճութեան երիտասարդաց մարմնոյն վըքայ գործած աւերները շատ ու շատ են։ Բայց մենք այս հաստատ համոզումը ունինք որ այս սովորութեան յառաջ բերած բարոյական վիճաս ու անկումները աւելի մեծ են։ այս յոռի գոծողութեան մէն մի կատարումը՝ սանդուխ մըն է որ երիտասարդը կ'իջեցնէ դէպի վար, դէպի նկարագրի քայքայումը, դէպի անբարոյականութեան խոր վիրապը։ Պատանիի սրտին մէջ չարն ու բարին զանազանելու յատկութիւնը կամաց կամաց կը բթանայ ու կը մարի, քանզի նա իր սրտին մէջ խղճին դէմ գործելու գիտակցութիւնը ունի։

Դիճութիւնը ունի մի ուրիշ ձեւ որ կը կոչուի մտային զինուրիիւն։ այս ձեխն տակ գիճութեան գործողութիւնը մտքով կ'սկսի ու մտքով կը վերջանայ։ Մըտային գիճութիւնը՝ բռնկող բոց մըն է որ պատանիին միտքը ու երեակայութիւնը կը վառէ սեռային ցոփ ու աղաւոտ պատկերներով ու զանոնք մոխիր կը դարձնէ։

Գիճութեան ունէ մի ձևին ենթակայ պատանին կամաց կամաց իր դասերուն, իր արհեստին, իր ընտանիքին ունեցած հետաքրքրութիւնը կը կորսնցնէ։ Մւելի ցաւալի է տեսնել մանաւանդ որ պատանին այս մոլութեամբ կը կորսնցնէ իր հաստատ կամքը ու կորովը։ այս մոլութիւնը կարծես իր մէջը ունի թմրեցուցիչ թոյն մը որ կը թուլացնէ ամէն ինչ։

Գիճութեամբ բարոյապէս ինկած պատանի մը ուրիշ մոլութեանց ու ուրիշ մեղքերու մէջ ալ շատ դիւրութեամբ կ'իյնայ։ Հոս կարծենք շատ յարմարութիւն կ'առնէ յիշել Պողոս Առաքեալի այն խօսքը թէ՝ «Մեղքը մեղք կը ծնանի»։ Իիչ առաջ յիշեցինք որ տկար մարմիններու վրայ ախտածին միքրոպներ աւելի դիւրաւ կը յարծակին։ Նոյնը ալ աւելի ճշմարտութիւն է բարոյական տեսակէտով։ գիճութիւնը ուրիշ անբարոյականութեանց և ուրիշ մեղքերու համար պարարտ հող մը կը պատրաստէ։ այս մոլութեան ենթական աւելի դիւրութեամբ կընայ գողնալ, կընայ շնել, կընայ ստել ու բամբասել։ այս կերպով այս մոլութիւնը կ'ըւլայ մայր մոլութեանց։

## ԳԻՇԵՐԱՅԻՆ ՀՈՍՈՒՄՆԵՐԸ

Արբունքի հասած պատանիի մը սերմամանները կամաց կամաց սերմով լեցուելու կ'սկսին, ինչպէս որ առկից առաջ յիշեցինք. հոս սերմի կարեոր մի մասը կրկին արեան մէջ խառնուելով՝ մարմնոյ տարրեր հիւսուածներուն համար կենսական սնունդ մը կը մատակարարեն. իսկ մնացած մասը որ սերմամաններու մէջ կը հաւաքուի, բնական կերպով մը պէտք է պարպուի. այս պարպումին համար բնութեան դործածած բնական միջոցը զիշերային հոսումներն են. այս հոսումները ամիսը մի քանի անգամ քունի մէջ ինքնարերաբար կը պատահին և ամորձիգները իրենց վրայ բեռցած ճնշումէն կ'ազատին։ Այս շատ բնական եղող երեսոյթի առաջին անգամ պատահումը՝ շատ անգամ տգէտ պատանիները սարսափի մատնած է. անոնք այս երեւոյթը անակնկալ ու վնասաբեր բան մը կարծած են. մինչդեռ անոնք այս բնական երեւոյթի մասին առաջուրնէ տեղեկացած ըլլային, երբեք չպիտի մտահոգուէին։ Գիշերային հոսումները այն ատեն անբնական ու վնասաբեր կ'ըլլան երբ անոնք պէտք եղածէն աւելի յաճախ պատահին։

Այս մասին պատանիները երեք դասակարգերու

կրնանք բաժնել։ Ա. Տկարակազմ. Բ. Միջակ, եւ Գ.  
Քաջառողջ։ Առաջին դասակարգին համար ամիսը ան-  
գամ մը գիշերային հոսումը բնական է։ Երկրորդին հա-  
մար ամիսը երկու երեք անգամ, իսկ երրորդին հա-  
մար՝ չաբաթը անգամ մը բնական կրնայ համարուիլ։  
Գիշերային հոսումներու չափէն աւելի պատահու-  
մը տեղի կ'ունենայ այն ժամանակ, երբ պատանին ցե-  
րեկը՝ գիճութեամբ, սեռային անպատկառ խօսակցու-  
թիւններով ու ցոփ վէպերով կ'զբաղի և իր միտքն ու  
իր երեւակայութիւնը այս տեսակ խորհրդածութիւննե-  
րով կը լեցնէ. բնականաբար՝ ցերեկուան երեւակայու-  
թիւն ու տպաւորումները՝ կը ծնին գիշերային այն-  
պիսի երազներ որոնք յաճախակի սերմահոսումնե-  
րու պատճառ կ'ըլլան։ Ահաւասիկ այս պարագա-  
ներու տակ գիճութեամբ թուլցած սերմամաններու  
գոները ամենայն դիւրութեամբ կը բացուին ու այլնս  
արդելք մը չեն կազմեր գիշերային հոսումներու յաճա-  
խակի պատահման։

Կան նաև կարգ մը երկրորդական պատճառներ,  
որոնք գիշերային հոսումները կը դիւրացնեն։ Պատա-  
նիններու համար շատ թանձր և կակուղ անկողիններու  
մէջ քնանալ իրենց մարմնոյն կեզրոնական մասերուն  
մէջ չափազանց ջերմութիւն մը յառաջ կը բերէ. այս  
ջերմութիւնը արեան խոնում՝ ու հետեւաբար առանգա-  
մի գրգռում կը ծնի ու այսպէսով գիշերային հոսում-  
ներու հաւանականութիւնը կ'աւելնայ։

Գիշերային հոսումները ընդհանրապէս կը պատա-  
հին այն ատեն երբ ենթական կը քնանայ իր կոնակին  
վրայ. այս պարագան ունի իր բնագիտական պատճառ-  
ները. այս դիրքի մէջ ջրվաթով լեցուած մէզամանը կը

ՃՆՉԵ սերմամաններու վրայ, որ ճիշդ իր ներքելը կը գտնուին, այս ճնշումը՝ սերմամաններու կանխապէս թուլցած դռները բանալու ու սերմը դուրս թափելու համար բաւական առիթ մը կ'ընծայէ, Բնական կերպով պատահած զիշերային հոսումները ընդհանրապէս կ'իմացուին բայց երբ անոնք յաճախ պատահին, այն ատեն ենթական չիմանար, մինակ ճերմակեղէններու վրայ մնացած հետքերէ զիշերային հոսման վերահասու կ'ըլլայ:

Կան մարդիկ որ բնութեան վերոյիշեալ բնական միջոցը բաւական չեն նկատեր և սերմամանները պարպելու համար ապօրինի սեռային յարաբերութիւնը անհրաժեշտ կը կարծին: Շատ անգամ ցաւով լսած ենք որ մինչև անգամ մեր արուեստակիցներէ ոմանք իրենց ներկայացող երիտասարդներու տկարութիւն և հիւանդութիւնները՝ սերմամաններու կանոնաւոր չպարպուելուն կամ սեռային զգացումներու գոհացում չգտնելուն վերագրելով՝ զանոնք կնամոլութեան և բոզանոցներ առաջնորդած են և այսպէսով շատ մատղաշ կեանքեր փնտացած են: Այս տեսակէոը մեզի համար սխալ և անհասկնալի է. ախտաբանութեան մէջ սեռային ժուժկալութեան հետևանքները նկարագրող գլուխ մը դեռ չէ բացուած, քանզի չիկայ այսպիսի հիւանդութիւն մը: Իսկ սեռային չտփուզանցութեանց ու մոլութեանց յատկացուած էջեր հոն կարծուածէն շատ տեղ կը զրաւեն: Բնութիւնը իր գործերը մեզմէ շատ լաւ զիտէ. պատանիի մը համար արդէն մինչև տասնըութերորդ տարիքը արբունքի ժամանակն է. տասնըութէն մինչև քսաներեքերորդ տարիքը կատարելագործման ժամանակն է. ուստի մինչև այս տարիքը երիտասարդի մը համար

բնական կեանքը՝ սեռային ժուժկալութեան կեանքն է, քանզի մինչև այն ատեն պատրաստութեան ժամանակն է. այս տարիքին հասած երիտասարդ մը ալ ֆիզիքապէս կատարեալ զարգացած մարդ մըն է և պէտք է ամուսնանայ և իր ապագայ սերնդեան գոյութիւնը ապահովէ:

---

## ՊԱՏԱՆԵԿԱՆ ԿՈՐՈՎԸ

---

Պատանիներ քաջագործութիւններէ և հերոսութիւններէ շատ կը հրապուրուին. այս տեսակ վէպերը հետաքրքրութեամբ կը կարդան. իրենց միակ փափաքն է ըլլալ զօրաւոր ու քաջ, կ'ուզեն ունենալ Սամսոնի բազուկները, կը փափաքին կատարել Դաւիթ մարգարէի քաջագործութիւնները: Յիրաւի այս փափաքը երիտասարդի մը համար նուիրական ու պաշտելի է. պէտք է որ այդպէս ըլլայ: Մենք քու սրտիդ այս անկեղծ փափաքը ամէն կերպով քաջալերել կ'ուզենք: Այս միտումը սեռային զգացումներուդ զարթնումին հետ շատ սերտ յարաբերութիւն մը ունի. ասկից առաջ յիշուած՝ ամործիգներուդ մէջ պատրաստուող ներքին արտադրութիւնն է որ քեզ կը դրդէ ու կը մղէ ըլլալու զօրաւոր, քաջ ու խիզախ: Այս բնական փափաքը ուրիշ

քան մը չէ այլ պարզապէս կեանքի պայքարին մէջ մտնելու համար բնութեան նախնական պատրաստութիւնն է :

Այո՛, այս կեանքի պայքարին մէջ դուն ալ պէտք է մտնես ու պայքարիս ցմահ։ Կեանք ըսուածը պատերազմ մըն է, կրկէս մըն է որու մէջ մտնելէն առաջ պէտք՝ է պատրաստուիս, ինչպէս ըմբիշ մը կը պատրաստուի ըմբշամարտի համար կամ զինուոր մը պատերազմի համար։ Բնութիւնը ամէն կերպով կը ձգտի քեզ պատրաստել այս պայքարին համար. ուստի դուն ալ իրբեւ սուրբ պարտականութիւնն մը, պարտիս աշխատիլ ամէն տեսակ միջոցներով, որպէսպի միշտ զօրաւոր ու առողջ, կազմ ու պատրաստ ըլլաս առջեւդ բացուած կեանքի պայքարին մէջ նետուելու համար։ Դոյութիւնդ ու ապրելու իրաւունքդ ձեռք ձգելուն միակ ճամբան այս է։ Կեանքի պայքարը լոկ ֆիզիքական չէ, հոն կայ մտային պայքար, հոն կայ նաև բարոյական պայքար։ Աշխատէ որ այս երբեակ պայքարներուն ամէն մէկուն մէջ հանդիսանաս առաջնակարգ՝ իրբեւ ազնիւ հերոս մը։

Դուն պէտք է լաւ ըմբռնես որ քեզի նուիրական եղող այս ուժը ու կորովը ունենալու համար և կեանքի պայքարին մէջ յաղթող հանդիսանալու համար, քեզի արգելք ըլլալիք ամենամեծ թշնամիներէն մէկը սեռալին մոլութիւնն է :

Հին Յոյներու ու Հռոմայեցիներու ժամանակ կը րկէսի մրցումներու և նղիմպեան խաղերու մասնակցող երիտասարդներ, ամիսներ առաջ պարտ էին սեռալին տեսակէտով ժուժկալ ըլլալ ու իրենց ֆիզիքական ուժերը խնայել, որպէսպի մրցման օրը իրենց հաւաքական ուժերով պայքարէին ու ամփիթատրոնի բիւրաւոր հանդիսականներուն լիուլի գոհացում տային։

Այսօր կան երկիրներ, ուր նոր սերունդի ֆիզիքական ուժ և բարոյական կորովը զարգացնելու ու այս կերպով զիրենք կեանքի պայքարին պատրաստելու համար ծախսուած գումարներ՝ կրթութեան համար ծախսուած գումարներէն շատ աւելի են։ Այս խնդրոյն համար աշխարհիս պատմութեան մէջ ո՛չ մի ժամանակ հիմակուան չափ կարեւորութիւն տրուած է։

Միջ-գոլէճական ամէն տեսակ մրցումներ ու խաղեր, պոյ սքառութներ, արդիացած Ողիմպեան միջազգային խաղեր մեր կարծածէն շատ աւելի մեծ համեմատութիւններ առած են։ Այս մասին սեռային ժուժեկալութեան կարեւորութիւնը հիմա ա՛լ աւելի ուշադրութեան առարկայ դարձած է։ Այս մարզանքներու այսչափ կարեւորութիւն տալու մէջ նպատակը կրկնակէ։ այս կերպով թէ պատանիները ամէն տեսակէտով կը զարգանան և թէ սեռային մոլութիւններէ անոնց ուշադրութիւնը ուրիշ կողմ դառնալով, միտքերը տարբեր բաներով կ'զբաղին։

Եթէ դուն կ'ուզես ունենալ զօրաւոր մարմին մը ու առողջ միտք մը պէտք է մասնակցիս ամէն տեսակ մարզանք ու խաղերու։ Խաղերը կեանքի պայքարի նմոյշներն են. անոնց մէջ մտնելով կը սորվիս կեանքն ու անոր ոգորումները, կը սորվիս հնագանդութիւն, համբերութիւն, կարգ ու կանոն, քաղաքավարութիւն, գործակցութիւն, քաջութիւն ու ազնուութիւն. կը սորվիս նաև՝ ինչպէս պէտք է յաղթել պատուով և երբեմն ալ ինչպէս պէտք է յաղթուիլ պատուով, քանզի կեանքի մէջ անյաջողութիւններ ալ կրնան պատահիլ։


Եթէ դուն զիճութենէ վարակուած ես, այս մարզանք ու խաղերու լաւ թեկնածու մը չես կրնաը ըլլու,

քանզի մարզանք ընելու համար քեզի պէտք եղած թանկագին նիւթերը ուրիշ կերպով կը վատնես եւ քու մսաններդ ու ջիղերդ տկար կը թողուս։ Ուստի, ո՞վ պատանի, քու ծաղիկ հասակիդ փառքն ու պատիւր կազմող ուժը, կորովը ու քաջութիւնը կ'ուղե՞ս փոխել այս անպատկառ հաճոյքով։ ասոնք քու պատանեկան անբիծ ճակատդ բոլորով ականակուռ թագեր են։ կ'ուղե՞ս զրկուիլ անոնցմէ։ Մենք այնպէս կը հաւատանք որ, պատանի մը՝ որու երակներու մէջ մաքուր արիւն մը շրջան կ'ընէ ու ո ե է հիւանդութիւն չունի, թող ըլլայ կազմով տկար, մինչև անգամ այս մոլութեան ենթակայ, եթէ անմիջապէս իր յոռի ընթացքը փոխէ և պէտք եղած լաւ առողջապահական պայմաններու տակ սկսի մարզանք խաղ ու պաղ լոգանքներու։ նա վստահաբար չորս հինգ տարուան ընթացքին իւր քաղաքին հզօրագոյն այր մարդերէն մէկը պիտի ըլլայ։ Աքիլէսներ միայն հին պատմութեանց մէջ երեւան չեն եկած։ հիմա կան աւելի զօրաւոր և աւելի տոկուն մարդիկ։ այժմու մարզական կրթութեանց սկզբունքները շատ աւելի զարգացած են քան թէ հին ժամանակները։ Ախալ է այն գաղափարը թէ մարդկային մարմինը դարէ ի դար միշտ յետադիմական բնութ մը ունեցեր է, ո՛չ երբեք։ Բարեշրջումը ամէն բանի մէջ դեռ կանգ չէ առած։ ամէն ինչ կը բարեփոխուի ու կը զարգանայ։ մարդիկ մարմնով, մտքով ու հոգւով կը զարգանան միշտ։

Դուն պէտք է լա.. համոզուիս որ քու մարմինդ՝ քու հոգւոյդ ու մտքիդ հետ շատ սերտ յարաբերութիւն մ'ունի։ «Առողջ միտք առողջ մարմին մէջ կը կայանայ» կ'ըսէ առածը։ Դուն ունեցիր առողջ ու լաւ զարգացած մարմին մը, նա պիտի զօրավիդ ըլլայ ու


մղէ քու միտքդ ու հոգիդ, ըլլալու աւելի ազնիւ, աւելի առողջ և կայտառ. ահա այն ատեն պիտի կարենաս մղել կեանքի պայքարը յաղթականօրէն. այն ատեն պիտի կարենաս ըլլալ օդտակար քու ազգիդ ու ցեղակիցներուդ :

Ուրեմն օ՞ն, ով պատանի, եթէ կ'ուզես ըլլալ մարմնով ուժով, սրտով քաջ և մտքով առողջ, մի՛ թունաւորեր դուն զքեզ այս վարակիչ մոլութեամբ. մի՛ զրկեր մարմինդ շինիչ և կազդուրիչ հեղուկներէ. Միանգամ ընդմիշտ ձգէ՛ այս գէշ սովորութիւնը, քանի ուշ չէ տակաւին: Եթէ այս մոլութեան տակաւին ինկած չես — կը շնորհաւորեմ զքեզ. արդ՝ խոստացիր որ պիտի չվարակուիս անկէ: Մի՛ փորձուիր կամաց կամաց ձգելու, ձգէ՛, բայց անգամ մը ձգէ. որովհետեւ մի քիչ յապաղում, մի քիչ վարանում քեզի համար աղէտաբեր կընայ ըլլալ:



## ԻՆՉՊէ՛Ս ՊԷՏՔ Է ԴԱՐՄԱՆՈՒԻԼ

### ԳԻՃՈՒԹԵՆԷ



Արդի բժշկութիւնը մեզի կը սորվեցնէ որ, բուժման ամենաազդու կերպը՝ նախազգուշական միջոցներ գործածելով երբեք չհիւանդանալն է. բժշկութեան այս նոր մեթոդը վերջին տարիներու մէջ հսկայ քայլեր առած է և այս կերպով նոր առողջապահութիւնը հիմնական յեղաշրջում մը ունեցած է: Նախազգուշական դար-

մանումը այս հիւանդութեան համար ալ աւելի կարեւոր է, մեր զաւակները այս մոլութեան մէջ իյնալէն առաջ պէտք է փրկուին:

Մենք վստահ ենք որ եթէ մեր մանչերը յարմար ժամանակին՝ այս մոլութեան մասին պէտք եղած ծանօթութիւնները առնեին, անոնցմէ մեծամասնութիւնը այս փորձութեան մէջ չպիտի իյնային: Ուստի մեր ընտանիքներու, դպրոցներու ու արհեստանոցներու մէջ, գիրքերու, դասախոսութիւններու և անհատական խօսակցութիւններու միջոցաւ այս խնդիրը մեր պատանիներուն հասկնալի կերպով պէտք է պարզուին:

Սիրելի տղա՛ս, թերես դուն զիտակցաբար կամ անդիտակցաբար մինչեւ հիմա այս յոռի ընթացքը շարունակողներէն մէկն ես. եթէ այսպէս է, անշուշտ ֆիզիքապէս ու բարոյապէս ինասներ կրեցիր, երանի թէ անցած բաներ չեղած ըլլային, բայց մի՛ յուսահատիր, քու բուժիչ սպեղանիդ Նախախնամութեան կողմէ քումարմնոյդ մէջ զետեղուած է. քու պատանի մարմինդ գեռ շատ պահեստի կենսունակութեան պաշարներ ունի. բնութիւնը քու արխւնդ անհատնում բուժիչ չիճուկներով օժտած է. քու գեղձերդ դեռ լիք են այլազան շինիչ հորմոններով. ասոնց ամէնը անմիջապէս գործի լծուելով քու խանդարուած առողջութիւնդ պիտի վերականգնեն և նորոգեն: Եյս մասին մենք ալ առիթէն օդուելով կ'ուզենք քեզի մի քանի կէտեր մատնանշել, որոնք այս մասին քեզի օգտակար կրնան ըլլաւ:

Ա. ) Քեզի համար մէր յանձնարարելիք ամենակարեւոր դարմանը նաստառն կալին է. վերահստատէ առնական կամքդ ու կորովդ ու գործածէ զայն. հզօր կամքն է որ քեզ կրնայ աղտոտել այս մոլութեան ճի-

բաններէն, միանգամ ընդ միշտ որոշէ ձգել այս յոռի ընթացքը և ամէն ինչ լմնցած է։ Դուն պէտք է զիտնաս որ քու սրտիդ մէջը այնպիսի ուժեղ կամքի զօրութիւն մը զետեղուած է որ եթէ կամիս զայն գործածել, զայն կասեցնող ոյժ մը չիկայ, անոր առջեր պիտի ոչնչանան բոլոր խոչնդոտ ու դժուարութիւնները։

Բ.) Այս գէշ սովորութիւնը թերես քեզ մենակեաց ըրած է. մարզանք, խաղ ու պտոյտներով շատ չես հետաքրքրուիր. հիմա սրտանց կը փափաքինք քեզի ներշնչել այն գաղափարը թէ կանոնաւոր բացօղեայ մարզանք ու խաղերը, պաղ լոգանքները քեզի համար այս մասին մեծ կարևորութիւն մը ունին և պարտիս առաջին պատեհութեամբ սկսիլ անոնց. այս բանները յատկապէս պատանեաց ու երիտասարդաց համար իրենց առօրեայ սնունդին՝ չափ կարեոր ու անհրաժեշտ պէտքեր են։ Մարզանք, աշխատանք ու խաղերը այս յոռի ընթացքէն քեզ ազատելու համար ծանօթ ազդու միջոցներ են։ Այս պատճառով է որ զիւղերու մէջ ապրող ու երկրագործութեամբ զբաղող պատանիներու մէջ զիճութիւն չէ ընդհարացած այնչափ որչափ քաղաքներու մէջ։ Քու միտքդ սեռային ցոփ մտածում ու խորհուրդներէ դարձնելու կամ զանոնք քեզ մոռցնելու համար, ասկից աւելի լաւ միջոց մը չենք կրնար յանձնարարել։ Մարզանքներու տեսակները շատ ու շատ են, Շուէտական մարզանքներ, վաղել, ցատկել, լողալ, գործիքներով մարզանքներ, խաղեր, պարզ քալելն անզամ արագ ըլլալու պայմանաւ լաւ մարզանք մ'է։

Առողջապահական փորձերով ստուգուած է որ ուեէ առողջ անհատ մը պարզապէս իր գոյութիւնը պահելու համար, այսինքն ապրելու համար, օրական լեց

Քիլօմետր քալելու հաւասար մարմնային չարժումներ ընելու պէտք ունի. պատանիներ առկէ աւելին ընելու տք ունին, քանզի մեծնալու ու զարդանալու կարօտ են:

Դ.) Զբաղի՛ր, պարապ մի՝ կենար, անդործ անցուցած ժամերդ են որ քեղի համար վտանգաւոր կըրնան ըլլալ. այս իրողութիւնը ոչ թէ մինակ քու, այլ բոլոր մարդկային ցեղի տկար մի հանգամանքն է. այն որ անգործ է, ընդհանրապէս գէշ խորհուրդներէ տարուելու վտանգին մէջն է: «Անգործութիւնը ոճրագործութեանց բոյնն է» կ'ըսէ առածը: Բւստի այս մոլութենէ ազատելու համար, զբաղի՛ր արհեստովդ, զբաղիր աշխատանքովդ, զբաղիր գրքերովդ ու գրչովդ, զբաղիր ջութակովդ ու դաշնակովդ, որպէսզի միտքդ, աչքերդ, ականջներդ ու ձեռքերդ գործեն ու ուշադրութիւնդ ուրիշ բաներու դառնայ. այն ատեն աղտոտ խորհուրդներ առիթ չպիտի կարենան գտնել պղծելու քու սնամեղ սիրտդ:

Ե.) Աշխատէ որ երեակայութիւնդ մաքուր պահու, նոյնպէս և լեզուդ. ցերեկուան անբարոյական խօսակցութիւնները ու անվայել երեակայութիւնները, դիշերը երազներուդ մէջ՝ քեզ անոնց իրագործման կ'առաջնորդեն և զիշերային հոսումներու պատճառ կ'ըլլան: Ճերեկդ թող ըլլայ խաղաղ ու մաքուր որպէսզի քունդ ու երազներդ ալ ըլլան խաղաղ ու մաքուր:

Ե.) Առաջին օրէն սկսէ՛ ամէն առաւօտ պաղ ջուրով լոգանք առնելու և շարունակէ ամառ ձմեռ մինչև կեանքիդ վերջը, միայն թէ յիսուն տարիքէն վերջ պաղ ջուրը զով կամ գաղջ ջուրի պէտք է վերածել: Երկայն ժամանակ զիճութեամբ խանգալուած առող-

ջութիւնը վերահաստատելու համար, մասնաւորապէս յաճախակի գիշերային հոսումները դադրեցնելու համար, ասկէ աւելի ազդու միջոց մը չես կրնար գտնել: Լոգի՛ր, քանզի մարզանք մընէ բոլոր մարմնոյդ համար. լոգի՛ր, քանզի մաքրութիւն մ'է. լոգի՛ր, քանզի բոլոր մարմնոյդ վրայ կատարուած մարձում (massage) մ'է. լոգի՛ր, քանզի կը կարծրացնէ (harden) քու մարմինդ պաղին և պաղառութեան դէմ. լոգանքը ջիղերուդ ուժ ու թարմութիւն կը պարգևէ, մարսողութիւնըդ ու սննդառութիւնդ կը զօրացնէ, մարմնոյդ մէջ հաւաքուած թունաւոր նիւթերու արտաքսումը կը դիւրացնէ: Անոր բազմատեսակ օգուտները թուելու համար այս էջերը մեզի չեն ներեր. ստուգուած իրողութիւն մ'է որ աշխարհիս վրայ ամենաերկայնակեաց և ամենակենսունակ ազգերը, ամենօրեայ պաղ լոգանք առնելու սովորութիւն ընող ազգերը եղած են: Ուստի այս գէշ սովորութեամբ վարակուած ըլլաս կամ ոչ սկսէ պաղ լոգանքներու, վստահ եղիր որ նա մեծապէս պիտի օգնէ քու բարօրութեանդ ու երջանկութեանդ:


Զ.) Մի կարդար անբարոյական սիրային վէպեր որոնք քու ուղեղիդ բջիջները կը պղտորեն, այլ մաքուր ու ազնուացուցիչ գիրքեր կարդայ: Օղի մի գործածեր քանզի հաստատուած իրողութիւն մէ որ օլին ուղեղին մէջ սեռային կեղրոնները կը գրգռէ ու նոյն ժամանակ քու կամքի զօրութիւնդ կը տկարացնէ. սեռային ամենամեծ ոճիրները շատ անգամ օլիի ազգեցութեան տակ գործուած են: Մի ուտեր չափազանց համեմուած կերակուրներ որոնք նոյնպէս իլրնան զըրգըուել քու սեռային զգացումներդ:

է.) Մի վարանիք ընտրելու հաւատարիմ և փորձառու բարեկամ մը՝ որուն կրնաս մօտենալ ու կրնաս խօսիլ վստահութեամբ այս մասին ունեցած դժուարութիւններդ. այս բարեկամը կրնայ ըլլալ ծնողք մը, ազգական մը կամ ուսուցիչ մը որ ամենայն ուրախութեամբ պիտի ուզէ օգնել քու դժուարութիւններուդ մէջ։ Այս մոլութենէ ազատուելէ վերջ պէտք է նաև զգաս պարտականութիւն մը քու հասակակիցներուդ հանդէպ, զանոնք պարտիս ազատել այս աղէտէն։ քանզի դուն աւելի դիւրութեամբ կրնաս մօտենալ ու ազդել անոնց։

---

## ՎԵՆԵՐԱԿԱՆ ԿԱՄ ՍԵՌԱՅԻՆ

### ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ



Սեռային խնդիրներու վրայ զրելու ժամանակ, կ'արժէ նաև մի քանի տողեր յատկացնել անոնց վերաբերեալ հիւանդութիւններու մասին. որոնց գլխաւորներն են ֆրանկախտն ու ջերմամիզութիւնը՝ որ ախտաբանական գրքերու մէջ կարեւոր տեղ մը կը բռնեն։ Բնդհանրապէս մարդիկ այս հիւանդութեանց մասին շտառ տգէտ կը զտնուին. երբեմն ալ կան մարդիկ որ այս ախտերու մասին շատ բաներ զիտեն ու շատ բաներ կը խօսին, բայց դժբաղդաբար սխալ բաներ կը խօսին։

Սեռային հիւանդութիւնները մարդկային ցեղի յատուկ շատ հին ու տիեզերական ցաւեր եղած են։ Ասոնց համար՝ ուրիշ շատ ախտերու եղածին պէս, ոչ դասակարգի, ոչ ցեղի, ոչ ալ կլիմայի տարբերութիւնը կայ. անոնք բեւեռէ բեւեռ, ամէն երկիր ու կլիմայի մէջ նոյն սաստկութեամբ իրենց աւերները կը գործեն, Սառուցեալի էսքիմօցին ու հասարակածի խափշիկը. թագաւորներ ու յետին ստրուկներ կը տառապին նոյն եղանակով ։ Մարդկային տառապանքի ծանօթ եռոտանին՝ այսինքն թոքախտ, Փրանկախտ և ուռականութիւնը՝ (cancer) բոլոր մարդկային մահերու մէկ երրորդին պատճառ կը հանդիսանան։ Այս մահասփիւռ գործունէութեան մէջ թոքախտէն վերջը Փրանկախտը կուգայ։


Այս սեռային հիւանդութիւնները երկու կերպերով մարդկային կեանքին ու երջանկութեան կ'սպառնան։ Ա. Ասոնք ուղղակի մահ պատճառելով կը հնձեն մարդկային շատ կեանքեր, յատկապէս ծաղիկ կեանքեր են որ կը թառամին՝ քանզի սեռային գործունէութիւնը երիտասարդութեան ժամանակամիջոցին յատուկ է։ Բ. Զերմամիզութիւնը՝ ծննդաբերութիւնը խափանելով, իսկ Փրանկախտը՝ վիժումներու պատճառ ըլլալով՝ մարդկային ցեղի բազմացումը զգալի կերպով կը պակսեցնեն։ Հաշուեցուցակներով հաստատուած է որ բոլոր ծննդաբերութեանց ութէն մէկը վիժումներ են։ Այս վիժումներու ամենամեծ պատճառը Փրանկախտն է։ Վեներական ախտերու մասնագէտներէ ոմանք այնպէս կը կարծեն որ եթէ այս ախտերու պատճառու անսերունդ մնացած ընտանիքներու կտրուստը և պատահած վիժումները հաշուի առնուին, մարդկային ցե-

ԱՌ թուով իր նոր սերնդեան մէկ քառորդը այս ախտերու պատճառաւ կը կորսնցնէ :

Բնտանիքներու անսերունդ մնալուն հարիւրին եօթանասուն պատճառը ջերմամիզութիւնն է : Ջերմամիզութեամբ վարակուած կանանց հարիւրին յիսունը , ալ ծննդաբերութիւն չեն կրնար ունենալ : Բնութեան տուած վճիռ ու պատուհասները շատ անագորոյն ու անդարմանելի եղած են . սեռային անմաքուր ու ապօրինի ցորաբերութիւնները կարծես այս տեսակէ են . բնութիւնը իր անխուսափելի հետեւանքները միշտ կը պարտադրէ մարդուս վրայ : Բայց ցաւալի է որ յաճախ անմեղներ ալ կը գտնուին որ ուրիշներու յոռի ընթացքին զոհ կերթան :

Անձնասպան եղած շատ մը հին ազգերու պատմութեան էջերուն վրայ կրկին և կրկին արձանագրուած ճշմարտութիւն մըն է , որ անոնց անձնասպանութեան գլխաւոր պատճառը սեռային հիւանդութիւնները եղած են : Որովհետեւ այս ախտերը կը նմանին թշնամի բանակի մը , որ մարդկային կեանքը թէ՝ առջեւէն թէ ետեւէն կ'սպառնան . այսինքն թէ շատ մահեր կը պատճառեն և թէ ծնունդները կը խափանեն :


Ուստի այս կարևոր հիւանդութեանց մասին մեր պատանիները պէտք է իրազեկ ըլլան , քանզի ժողովրդեան բոլոր խաւերուն մէջ ընդհանուր պատերազմէն վերջ այս ախտերը կարծուածէն շատ աւելի տարածուած են :



## ՅՐԱՆԿԱԽՏԸ (SYPHILIS)

Ֆրանկախտը մեղի ծանօթ հիւանդութեանց շարքին պատմականապէս ամենահին հիւանդութիւններէն մէկն է. այս ախտի հազարաւոր տարիներ առաջ գոյութիւնը Եգիպտոսի սեպաձև գրերու միջոցաւ ստուգուած իրողութիւն մ'է. կայ ուրիշ ասլացոյց մը որ այս ախտի՝ ասկէ հազարաւոր տարիներ առաջ գոյութիւնը դրական կերպով մեղի լուր կուտայ. ֆրանկախտը՝ գանկի ոսկորներուն վրայ այնպիսի մասնաւոր ծակեր կը բանայ և ուրիշ ոսկորներու վրայ այնպիսի ուռեցքներ ու նշաններ կը թողու որոնք հազարաւոր տարիներ վերջը այս ախտի գոյութիւնը մեղի կը վկայեն: Զինաստանի և Մէքսիքոյի հին գերեզմաններէն հանուած մարդկային կմախքներ մեղի կը խօսին որ ասկէ երեքչորս հազար տարիներ առաջ ֆրանկախտը իր աւերները կը գործէր այս աշխարհի վրայ: Այնպէս կը կարծուի որ Քրիստոսի ժամանակ բորոտ անուան տակ անջատուած հիւանդները մեծ մասամբ ֆրանկախտաւորներ էին. 1490 թուականներուն այս ախտը իրը համաճարակ սարսափելի կերպով մը բոլոր Եւրոպան վարակեց. մեծ բանակներ ոչնչացուց և տասնեակ միլիոն մարդկային կեանքեր հնձելով՝ պատմութեան մէջ անմոռանալի հետք մը թողուց:

Ֆրանկախտը արեան հիւանդութիւն մ'է։ Մարդկային մարմնի մէջ չիկայ մաս մը կամ հիւսուած մը, որ այս ախտի մակաբոյծներու յարձակումէն զերծ կարենայ մնալ։ Նա ողնայարի ծուծէն մինչև եղունգները ամէն տեղ փտտումներ, բորբոքումներ, ուռեցքներ ու վէրքեր յառաջ կրնայ բերել։ Այս ախտը հարիւրին իննըսուն ուղղակի սեռային անժաքուր յարաբերութենէ և հարիւրին տասը անուղղակի կամ անմեղ միջոցներով կը փոխանցի։ Անոր պատճառը միքրոպ մը չէ այլ կենդանական աշխարհի պատկանող՝ ամենաստորին դասակարգէն մակաբոյծ մըն է, որ 1905 թուականին Soxhle. ֆրից անունով Դերմանացիի մը կողմէ գտնուած է։ մակաբոյծը շատ փոքր է և եօթէն մինչև տասը դալարումներէ բաղկացած հելեզօնական ձև մը ունի, ինչ-



նօ 8  
Ֆրանկախտի մակաբոյծները  
(Հազար անգամ մեծցուած)

պէս որ կը տեսնուի պատկերին մէջը. անուշը իր ձեւէն առած ըլլալով՝ սրիրիլլմ բալիտա (Spirillum

Pallida) կը կոչուի, շատ փափուկ մակարոյծ մ'է, մարդկային մարմնէն դուրս շատ շուտով կը մեռնի, անոր համար է որ օդի միջոցաւ բացարձակապէս անփոխանցելի է. մակարոյծը մարդկային մարմնէն դուրս մնուցանել ու աճեցնել մինչև հիմա շատ դժուար եղած է:

Այս մակարոյծը մեր արեան մէջ մտնելու համար միշտ բաց դրան մը կարօտ է, այս դուռը ընդհանրապէս աչքով անտեսանելի շատ փոքրիկ ճեղքուած մը է։ Մեր բերնի և ծննդական գործարաններու ներսի կողմը ծածկող բարակ թաղանթը (mucous membrane) մասնաւոր կերպով ֆրանկախտի մակարոյծներուն բարգաւաճման համար յատկացուած տեղեր են, հոս ունէ կերպով մը ինկած մակարոյծներ պղտիկ ճեղքուած մը կրնան գտնել ու հոն գտնուող հիւսուածներուն խորը թափանցելով իրենց գործունէութեան կը ձեռնարկեն. այս կերպով պատուաստուած մակարոյծը ունի իր թխուման ժամանակը. քսանէն մինչև յիսուն օր ունէ նշան մը չերեխիր. բայց վերջապէս հոն կարծը, պղտիկ ուռեցք մը երեան կուգայ որ քիչ վերջը բացուելով վէրքի մը կը վերածուի։

Ֆրանկախտը ունի երեք շրջաններ, առաջինը՝ ֆրանկախտի նախնական վէրքի երեցած առջի օրէն մինչև անոր բուժման ժամանակը անցած ատենն է որ մէկ երկու ամիս կը տես. այս վէրքը շանզըր (chancre) կը կոչուի որ ընդհարապէս արական գործարանին ծայրը կամ վրան կը գտնուի. շանզըր կրնայ գտնուիլ շըրթունքներու, լեզուի կամ մարմնոյն զանազան տեղերը ուր մակարոյծը ու է կերպով մը կը պատուաստուի։ Հիւսնդութեան ամենափոխանցիկ ժամանակը այս առաջին շրջանն է. այս փոխանցումը ընդհանրապէս սե-

ուային անմաքուր յարաբերութեամբ տեղի կ'ունենայ, երբեմն ալ անուղղակի կերպով ածելիներու, եղունգներու, տղրուկներու, շանգրի վրայի բամպակ ու լաթերու և այլ առարկաներու միջոցաւ կը փոխանցի:

Շանգրը բուժուելէ վերջը կը յաջորդէ երկրորդ շրջանը՝ այս ժամանակամիջոցի յատկանիշերն են գլխուցաւ, որ զիշերները աւելի կը սաստկանայ, ցաւը կրնայ տարածուիլ յօդուածները կամ ոսկորները. թեթև ջերմութիւն մը (38) կու գայ որ կը չարունակէ զիշերցերեկ, բոլոր մարմնի մորթին վրայ վարդագոյն կարմը-ը ու կներկներ ու շտիկներ կրնան երեան գալ, մազերը կ'սկըսին արագ արագ թափիլ, մարմնոյն բոլոր աւշային զեղձերը (Lymphatic glands) կը մեծնան ու կը կարծրանան. լինտերու վրայ, բերնի, քիթի և կոկորդի մէջ բոլբոքում ու վէրքեր կրնան երեան գալ. այս վէրքերը նոյնպէս փոխանցիկ են: Իր բերան, լեզու և շըրթունքներուն վրայ ֆրանկախտի վէրքեր ունեցող անձմը իր գաւաթ, դգալ, գլանիկ և թաշկինակով ուրիշները կրնայ վարակել. այս կերպով պատահած անուղղակի վարակման համար օրինակ մը տալ կ'ուղենք. ճանչցած ենք տասը տարեկան տղայ մը որ իր ձախ ձեռքին վրայ շանգըրը մը ունենալու դժբաղդութիւնը ունեցած էր հետեւեալ կերպով: Տղան դուրսը խաղցած ժամանակը կ'իյնայ ու ձեռքը կը վիրաւորուի. մօտէն անցնող մէկը, տղուն օգնելու նպատակաւ կուգայ և իր քովը գտնուող զեղուած կպուն լաթէն կտոր մը կը կըտ-րէ և զայն լեզուովը թրջելով տղուն արիւնող վէրքին վրայ կը փակցնէ. նոյն վայրը՝ երեք շաբաթ վերջը ֆրանկախտի շանգըրը երեւան եկած էր, քանզի այդ մարդը իր բերնին մէջ ֆրանկախտի երկրորդական վէրքերը ու-

նէր։ Այս տեսակ անուղղակի վարակումներ շատ քիչ անգամ կը պատահին . բայց մարդիկ յաճախ այս անուղղակի վարակումներէ ալ աւելի կը վախնան . տեսած ենք մարդիկ որ ուրիշ տեղ սուրճ կամ ջուր չեն կրնար խըմել , ճաշարան չեն կրնար ուտել , ուրիշներու հետ ազատ չեն կրնար յարաբերիլ . կեանքը իրենց համար գրեթէ բեռ մ'է , պատճառ՝ քանզի ֆրանկախտէ վարակուելէ կը վախնան : Թրանկախտէ չվարակուելու համար ամէնէն շատ վախնալու բանը՝ անմաքուր սեռային յարաբերութիւնն է , հարիւրին իննըսուն և աւելի ֆրանկախտի վարակումներուն պատճառը այն է :

Երկրորդ շրջանի ախտանշանները մէկ երկու տարի կը տեսն և անոր կը յաջորդէ երրորդ շրջանը՝ որ եթէ չըուժուի կը տեսէ մինչև կեանքին վերջը ու շատ հաւանականաբար սոյն ախտը անհատի վաղահաս մահուան պատճառ կ'ըլլայ : Այս շրջանին մէջ մարմնոյն ներքին մասերն են որ կը յարձակուին , ոսկորներու վրայ յաճախ ուռեցքներ երեան կուգան , որոնցմէ ուսէ մէկը կրնայ փտտիլ , այս կերպով դանկի ոսկորներուն վրայ ծակեր կրնան գոյանալ : Զղային դրութիւնը կը խանգարուի , ուղեղի և ողնայարի ծուծին մէջ բորբոքումներ կը պատահին , ուռեցքներ կը գոյանան որոնք անդամալուծումներու , ջլատումներու պատճառ կրնան ըլլալ . երիկամունքներու , սրտի , շնչերակիներու և լեարդի մէջ այնպիսի աւերներ տեղի կ'ունենան , որոնք անհատը կամաց կամ յանկարծակի կը մահացնեն :

Այս հիւանդութեան յատուկ շատ կարեոր երեսյթ մէ անոր ժառանգականութիւնը : Այս ախտով վարչկուած հայր մը կամ մայր մը եթէ անմիջապէս չի դարմանուի , անպատճառ կը փոխանձէ այս հիւանդութիւնը

իր նոր սերնդեան։ Անոնք շատ անգամ մարմնով ու  
մտքով տկար աշխարհ կուգան։ Երբեմն ալ խուլ,  
համբ ու հաշմանդամ կրնան ծնիլ։ Վիճակագրութիւն-  
ներով ստուգուած է որ ֆրանկախտաւոր ծնողաց  
նորածիններուն հարիւրին վաթսունը՝ կամ ծնելու  
ժամանակ կամ իրենց կեանքին առաջին վեց ամիսնե-  
րու ընթացքին կը մեռնին, որովհետև անոնց մարմ-  
նոյն բջիջները ֆրանկախտի մակաբոյծներու միջոցաւ  
թունաւորուած են ու իրենց ապրելու իրաւունքը կոր-  
սընցուցած են։ Այս ախտի պատճառաւ պատահած ան-  
թիւ վիժումներու մասին արգէն քիչ առաջ խօսեցանք։  
Այս բոլոր իրողութիւնները նկատի առնելով, վեներա-  
կան ախտերու նշանաւոր մասնագէտներէն մէկը յիրա-  
ւամբ ըստած է։ «Այն անհատը որ իր սաղմային բջիջ-  
ները կը թունաւորէ, աշխարհիս ամենամեծ ոճրա-  
գործն է» քանզի նա ոչ թէ մինակ իր, այլ իր թոռնե-  
րուն բջիջները թունաւորելով անոնց կանխահաս մահ-  
ուան պատճառ կը լինի։ Բնութիւնը կարծես այս ամէն  
բաները ի հաշիւ առնելով այս ախտի սերունդէ սերունդ  
տարածման չափ ու սահման դրած է։ այնպէս որ  
ֆրանկախտաւոր ընտանիքներու տկար գոյութիւնը շատ  
անգամ երրորդ սերունդէն անդին չանցնիր կը վերջանայ։

Ֆրանկախտը հազարաւոր տարիներէ ի վեր մարդ-  
կութեան սարսափ ազգող աղէտներէն մին եղած էր,  
բայց քսաներորդ դարու մէջ հնարուած դեղերու միջո-  
ցաւ նա իր առաջուան ահ ու սարսափը բոլորովին կոր-  
սընցուցած է։ 1905ին երբ անոր մակաբոյծը գտնուեցաւ  
նոյն տարին անոր բուժիչ դեղը նէօսալվարսանի գիւտը  
շատ բաղդաւոր զուգաղիպում մը եղած է։ այս և ու-


րիշ նորահնար գեղերով ձեռք բերուած յաջողութիւնները պարզապէս դարմանալի են, այնպէս որ ֆրանկախտը՝ մարդկային պատմութեան մէջ երբեմն տեսնըուած իր առաջուան մահասփիւռ համաճարակներու ձեւը երբեք չպիտի կընայ առնել։ Այս ախտով վարակուած անձեր այսօր ամենայն դիւրութեամբ կը դարմանուին եթէ ժամանակին և պէտք եղածին պէս գեղուին։

---

## ԶԵՐՄԱՄԻՂՈՒԹԻՒՆԸ

Զերմամիղութիւնը՝ ֆրանկախտի պէս արեան հիւանդութիւն մը չէ, այլ տեղային (locale) հիւանդութիւն մ'է։ Երկու բացառութեամբ անոր միքրոպները ծննդական և միղալին գործարաններու շրջանակէն դուրս չեն ելլեր։ Անիկա զրեթէ միշտ սեռային անմաքուր յարաբերութենէ կը փոխանցի և ֆրանկախտէն շատ աւելի ընդհանրացած ախտ մըն է։ Մասնագէտները այնպէս կը վկայեն որ մեծ քաղաքներու մէջ բնակող այր մարդոց հազարէն ութը հարիւրը մէկ կամ աւելի անգամներ այս հիւանդութեամբ վարակուած են։ Արդիկ ֆրանկախտով իրենց կեանքին մէջ մէկ անգամ կընան վարակուիլ։

Այս ախտի միքրոպը 1879 թուականին Նայսլը անունով գերման բժիշկի մը միջոցաւ գտնուած է։ Այս միքրոպը բուսական աշխարհի պատկանող միքրոպ մ'է, որ այս ախտով վարակուած մարդու առանդամի խողովակէն դուրս վազող թարախի մէջ միշտ առատ կերպով կը գտնուի։ ասոնք սուրճի երկու հատիկներու ձեւով միշտ զոյտ զոյտ և խումբերով կը գտնուին, ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ։



Նօ 9

Զերմամիզութեան միբրեպները որոնք կ'երեւին իբրեւ պզտիկ զոյտ կէտէր։ (1000 անգամ մեծցուած)

Այս հիւանդութիւնը նոյնպէս պատմականօրէն շատ հին հիւանդութիւն մ'է։ Շատ ցաւալի է որ այս հիւանդութիւնը հասարակ ժողովուրդի կողմէ միշտ շատ թեթեւ ու անիշաս հիւանդութիւն մը նկատուած է։ այս պատճառաւ մարդիկ զայն «պաղառութիւն» կամ «ծննդական գործարաններու հարբուխ» անուանած են ու բնականաբար անոր դարմանումը շատ անգամ յե-

տաձգած են։ Մինչդեռ անիկա բժշկական տեսակէտէն մասնաւորապէս խգական սեռին համար շատ լուրջ ու կարևոր հիւանդութիւն մ'է. կան հեղինակներ որ զայն կանանց վրայ անբուժելի կը նկատեն։

Զերմամիզութիւնը անմաքուր սեռալին յարաբերութենէ մէկ կամ երկու օր վերջը առանդամի ծայրէն կ'սկսի. առաջ կէս թափանցիկ հեղուկ մը կ'արտադրուի որ մի քանի օր վերջը թարախի կը վերածուի. բորբոքումը քերուըտուքով մը կ'սկսի որ քիչ վերջը ցաւի կը վերածուի. մանաւանդ միզելու ժամանակ սաստիկ կը վառէ. ահա «Զերմամիզութիւն» անունը ասկից առնուած է։ Բորբոքումը հոն չմնար, առանդամի խողովակէն դէպի վեր կը յառաջանայ, վերջապէս միքրոպները կը տարածուին Պրոստատի բաղադրեալ հիւսուածներուն մէջ. այն առեն ախտը ծանր երեսյթ մը կ'առնէ. սաստիկ ցաւ, շուտ շուտ միզել, արիւն, զերմերեան կուղան։ Պրոստատ հասած բորբոքումը անկից անդին երկու ուղղութիւն կրնայ առնել, կամ դէսլի մէզաման և երիկամունքներ կը յառաջանայ, կամ դէպի սերմաման, սերմի խողովակներ ու ամորձիզներ կ'ուղղուի։ Զերմամիզութիւնը որ ուղղութիւնն ալ առնէ հիւանդին վիճակը աւելի անտանելի կը դառնայ։ Բարեբաղդաբար զերմամիզութեան բոլոր վարակումները այնչափ հեռու տեղեր չեն տարածուիր. շատ անգամ բորբոքումը պրոստատ չհասած մի քանի շարթուան մէջ կրնայ բուժուիլ, եթէ պէտք եղածին պէս դարմանուի։ Երբեմն ալ բուժումը տարիներ կրնայ տեսել։

Զերմամիզութիւնը երբեմն մարդկային մարմնի տարբեր տեղերն ալ կրնայ վարակել. անոր միքրոպները արեան մէջ մտնելով մարդուս տարբեր յօդուածնե-

բուն մէջ բոյն կը շինեն և տեսակ մը յօդուածացաւ (Rheumatisme)յառաջ կը բերեն որ շատ դժուարաւ կը գարմանուի : Երբեմն այս հիւանդութեամբ վարակուած մարդիկ, իրենց ձեռքերովը ծննդական գործարաններու վրայ գտնուող միքրոպիները անգիտակցաբար իրենց աչքերուն մէջ կը պատուաստեն . անմիջապէս հոն բորբոքում, ցաւ և ուռեցք երեան կուգայ . աչքի բորբոքումներու մէջ ամենավտանգաւոր բորբոքումը՝ այս միքրոպիներու յառաջ բերած բորբոքումն է . որու հետեւանքը ընդհանրապէս կուրութեամբ կը վերջանայ :


Զերմամիզութեան միքրոպիները ծննդական գործարաններու անցքերուն մէջ մտնելէն վերջը, այդ վայրի հիւսուածներուն մէջ կը թափանցեն և հոն շատ մանր ընդհանրապէս աչքով անտեսանելի վէրքեր կը շինեն, ահաւասիկ թարախը այս վէրքերէն կ'արտազրուի հիւանդութիւնը բուժուելէն վերջ, բնականաբար այս վէրքերուն տեղը սպիներ (cicatrix) կը մնան . ծանօթ իրողութիւն մըն է որ սպիները միշտ բնականոն հիւսուածներէն աւելի նեղ ըլլալով՝ իրենց գտնուած վայրերը կը կծկեն, ահաւասիկ այս պատճառով է որ դարմանումէն յետոյ այս ախտէն վարակուած անձերու մէզի խողովակը յաճախ կը նեղնայ և միզելու համար մեծ դժուարութեանց ի'ենթորկուին . շատ անգամ այս նեղցած մէզի խողովակը գործողութեամբ բանալու ստիպողութեան տակ կը գտնուին : Նոյն դժուարութիւնը՝ նոյն կերպով կընայ պատահիլ սերմի խողովակներուն մէջ . անոնք այնչափ կը նեղնան որ ալ ամործիգներէն եկող սերմը կամ սաղմային բջիջներու անցքը անկարելի կը դառնայ : Եթէ այս բորբոքումը և անոր հետեւանքը եղող կծկումը՝ թէ աջ ու թէ ձախ սերմի խողովակներուն մէջն ալ սլատահած ըլլայ : այն ատեն այս-

պիսի երիտասարդ մը բացարձակապէս անսերունդ մը-  
նալու դատապարտուած է. այս գժբաղդութիւնը ան-  
բուժելի է և վիրաբուժութեան արդի միջոցները այս  
ժամին օգնելու համար անկարող են: Իգական սեռի մէջ  
այս գժբաղդութիւնը աւելի դիւրութեամբ կը պատահի.  
աջ ու ձախ ձուարանները արգանդին կցող խողովակնե-  
րը այս բորբոքումով կը զոցուին և սաղմալին բջիջնե-  
րու անցքը խափանուելով՝ ամլութիւնը անխուսափելի  
կ'ըլլայ:

Զերմամիզութեան յատուկ ձախողութիւն մը կայ  
որ շատ մը գժբաղդութեանց պատճառ եղած է: Այս  
ախտի՝ ապրող միքրոպները մարդկային մարմնի ան-  
ձանօթ անկիւններուն մէջ երկայն ժամանակ, երբեմն  
տարիներ, թագուն մնալու յատկութիւնը ունին. առ  
երեսյթս կատարեալ բուժուած կարծուած մարդիկ եր-  
կայն ժամանակամիջոցներ վերջը առանց պատճառի  
այս թագուն մնացած միքրոպներու արծարծումով կըր-  
կին նոյն ախտով վարակուած են: Այս բուժուած կար-  
ծուած անձինք շատ անգամ ամուսնանալով իրենց այս  
թագուն միքրոպներով իրենց անմեղ կիները վարակած  
են: Այս պահուած միքրոպները արթնցնելու համար  
շատ անգամ պաղառութիւններ, սեռային չափազան-  
ցութիւններ պատճառ կ'ըլլան. բայց երբեմն ալ առանց  
պատճառի անոնք կրկին գործունէութեան կը մղուին և  
շատ ընտանիքներու ապերջանկութեան պատճառ կ'ըլ-  
լան: Այս ղէպքերը՝ մինչև անգամ եթէ անգիտակցա-  
բար պատահին ցաւալի են. բայց ալ աւելի ցաւալի է  
տեսնել երիտասարդ մը, որ հիւանդ ըլլալը զիտնալով  
հանդերձ զայն առ ոչինչ կը համարէ և կը յաջողի կեր-  
պով մը ամուսնանալու ահա այսպէսով թէ իր և թէ իր  
կնոջ ապագայ կեանքը ու երջանկութիւնը կը մթնցնէ:



## ԾՆՐԱՑ ՀԱՄԱՐ



Տղոց յատկացուած այս գրութեան մէջ արդէն տեղ տեղ ծնողաց ուղղուած ակնարկութիւններ ընելու ստիպուած էինք, բայց հոս՝ ծնողաց համար կրկին մասնաւոր գլուխ մը յատկացնել թերեւս ոմանց համար անտեղի թուի. այսու ամենայնիւ՝ խորհելով որ ծնողքներ իրենք ես այս տողերը կարգալով քիչ շատ պիտի օգտըւին և իրենց զաւակներուն հետ աւելի հետաքրքրուելով՝ զանոնք յիշեալ խնդիրներու մասին ժամանակին ծանօթացնելու պիտի աշխատին. Միւս կողմէ խորհելով՝ այս տողերը կարգացող պատանիներ՝ շատ տարիներ չանցած իրենք ալ ծնողքներ պիտի ըլլան ու իրենց զաւակները այս ուղղութեամբ պիտի հրահանգեն, ուստի աւելորդ չհամարեցինք ծնողաց մի քանի խօսքեր ուղղել:

Շատ ցաւալի իրողութիւն մ'է որ մեր ընտանիքներու ու մեր գպրոցներու մէջ սեռային զգացումներու խնդիրը զրեթէ միշտ անտեսուած է: Մեր զաւակները գպրոցներու մէջ դաստիարակելու համար շատ զոհողութիւններ կ'լնենք, անոնց ուրիշ բաներ կը սորվե-

ցընենք, բայց այս կարեոր խնդիրը միշտ քօղի տակ պահուած է. որովհետեւ սեռային խնդիրները զաղտնի և ամօթ բաներ կը նկատուին: Մինչդեռ այս խնդիրը խիստ կարեւոր և պատանիներու մարմիններուն վերաբերող բան մ'է որու մասին տնպատճառ պէտք են զիտնալ: Իր ծննդական գործարաններու և սեռային հարցերու մասին տգէտ մնացող պատանի մը, կը նմանի աշխարհագրութիւն կարդացող ուսանողի մը որ աշխարհիս ամէն կողմերը կը սորվի բայց իր բնակած քաղաքը և անոր արուարձանները չի զիտեր: Մեր տղաքը ինչպէս կ'ուսանին հաշիւը, ելեքտրականութիւնն ու քերականութիւնը, նոյնպէս պարտին սորվիլ իրենց մարմինը ու անոր ծննդական գործարանները, պարտին սորվիլ սեռային զգացումները, անոնց գործունէութիւնը ու հոգեբանութիւնը:

Այս բաներու վերաբերող ծանօթութեանց զաղտնի պահուիլը, հետեաբար այս մասին եղած տղիտուտութիւնը ի՞նչ զեղծումներու, ի՞նչ չարաչար գործածումներու և ի՞նչ ցաւալի հետեւանքներու ծնունդ տրւած է: Ծանօթ իրողութիւն մ'է որ աշխարհիս վրայ զաղտնի կամ ծածուկ ու է բանի շորջ միշտ սխալներ և զեղծումներ գործուած են: Արբունքի հասած պատանի մը որ այս բնական երեսոյթներու մասին անտեղեակ ու տգէտ է, ալ՝ իր սրտին մէջ արթնցած սեռային զգացումներու մասին անտեղեակ չի կրնար մնալ, քանզի այս զգացումը մարգկային բնազգներու հզօրագոյնն է: Նա կը քշուի անոնց առջեւ, կը չփոթի անոնց էութեան մասին. շատ խղճալի է այն պատանի որ առաջին զիշերային հոսման ժամանակ սարսափի կ մատնուի:

Նա կը փափաքի այս բաներու մասին զիտնալ։ Մնողքը իրեն բան մը չեն ըսեր, ինքը համարձակութիւն չունի հարցնելու։ Բայց ուրիշ ճար չկայ. բնութիւնը կը պարտադրէ և նա վերջապէս ամէն բան կը սորվի։ Բայց ուսկի՞ց. — դժբախտաբար սխալ աղբիւրներէ. նա կը սորվի իր քովի անփորձ դասընկերէն, փողոցի անբարոյտկան բարեկամէն կամ տան տղէտ սպասաւորէն։ Միթէ աւելի լաւ չէ՞ր ըլլար եթէ դուն իրրե ծնողք ամէն բան ըսէիր ժամանակին քու զաւակիդ։ Այս կերպով առնուած թերի, սխալ ու անբարոյտկան ծանօթութիւնները յաճախ մեր պատանիները կ'առաջնորդեն՝ մոլութեանց անդունդը, ուր շատ մատղաշ կեանքեր թառամած են։

Մի՛ վարանիք ու մի՛ ամչնաք այս մասին պէտք եղած ծանօթութիւնները ժամանակին ձեր զաւակներուն տալու. քանզի ասոնք ոչ թէ անասելի ու գծուծ բաներ, այլ բնական և պարզ բաներ են. այս զգացում ու յարաբերութիւնները թող անոնց մտքին մէջ տպաւորուին իրրե պարզ ու անմեղ իրողութիւններ ինչպէս որ է բնութեան մէջ. քանզի. այս բաները եթէ դուն պարզ, մաքուր ու բնական ձեւերով չտեղիկացնես իրեն, նա կամայ ակամայ սխալ, անմաքուր ու անբնական կերպերով զանոնք սկիտի սորվի։ Մեր զաւակները այս բաները արբունք հասնելէն առաջ պէտք է տեղեկանան. զանոնք բնութեան միջոցաւ ծանօթացնել ամենաբնական մեթոտն է։ Վստահ եղիր որ այսպէս ընելով դուն քու զաւակներուդ ոչ թէ մինակ ծնողքը՝ այլ անոնց մտերիմ բարեկամն ալ պիտի ըլլաս, անոնք իրենք զիրենք քեզի աւելի մօտ սկիտի զգան ու իրենց բոլոր կեանքին մէջ քեզի երախտապարտ պիտի ըլլան։

Պատանիի մը սրտին մէջ արթնցած այս զզացու-  
մը եթէ փորձառու ծեռքերու մէջ շիտակ ուղղութիւն  
մը առնէ, նա պատանին մարմնով ու մտքով կը զար-  
գացնէ ու կ'ազնուացնէ, փայլ կուտայ անոր կեանքին,  
մղում կուտայ անոր տաղանդ ու կարողութիւններուն.  
իսկ եթէ առաջնորդուի անբարոյական ու տգէտ ընկեր-  
ներու միջոցաւ, պատանին թէ իր ընտանեաց թէ իր ազ-  
դին պատիւ բերելու տեղ անարգանք մը կրնայ ըլլաւ:

Այս մասին ծնողաց հետ ուսուցիչներն ալ ունին  
իրենց ծանր պատասխանատուութիւնը. շատ ցաւալի է  
որ այս յոռի սովորութեան գլխաւոր կեդրոնը մեր դըմ-  
րոցները եղած են: Այս մասին դպրոցի ուսուցիչները  
պէտք է արթուն կերպով հսկեն ուսանողաց վրայ. ա-  
նոնք քիչ մը փորձառութեամբ՝ այս մոլութեամբ վա-  
րակուած ուսանողները՝ իրենց նայուածք ու կեցուած-  
քէն, խօսքերէն, դասախօսութիւններէ ու բարեկամնե-  
րէն կրնան հասկնալ: Սեռային մոլութեամբ բռնուած  
ուսանողք պէտք է մասնաւոր ուշադրութեան առարկայ  
ըլլան. անոնց շատ մտերմաբար պէտք է մօտենալ և  
իրենց սխալ ընթացքը ցուցնելով զիրենք պէտք է ազա-  
տել. այս մասին երբեք դժուարութիւն չծագիր, պա-  
տանիներ՝ իրենց կարեկցող մէկը եթէ տեսնեն, անմի-  
ջապէս կը բանան իրենց սիրտերը և այս մասին խօս-  
ուած խրատները կ'ընդունին ամենայն սիրով:

Սեռային խնդիրներու և անոնց չարաչար գոր-  
ծածման մասին մեր նոր սերունդը հրահանգելու հա-  
մար, թէ մեր ընտանիքներու և թէ մեր դպրոցներու  
մէջ, անհատական ամէն ջանք պէտք է ի գործ դրուի.

բացի աստի, մարդակաղմութեան դասախոսութեանց  
ժամանակ այս խնդրոյն մասնաւոր կարևորութիւն պէտք  
է ընծայուի. երբեմն պատահեաց համար մասնաւոր հը-  
րապարակային բանախոսութիւններ պէտք է կաղմա-  
կերպուին, որպէսզի մեր զաւակները պէտք եղած ծա-  
նօթութիւնները առնեն ու խնայուին գալիք աղետներէն.

Վ Ե Ր Զ



## Թ Ա Կ Ի Բ Ե Ր ՈՒ Ց Ա Ն Կ Թ

Յառաջաբան	<u>էջ</u> 3
Եղն ու Արուն	
Սեռային զգացումները	6
Սեռային յարաբերութիւնը բնութեան մէջ	9
Սեռային բարեշրջումը բնութեան մէջ	11
Սեռային յարաբերութիւնը բոյսերու մէջ	14
Սեռային յարաբերութիւնը կհնդանիներու մէջ	18
Ծննդաբերութիւն	22
Արբունքը	27
Ծննդական զործարաններ	31
Սերմը եւ սաղմային բջիջները	36
Ամործիգներու ներքին անծանօթ արտադրութիւնը	39
Գիճութիւնը	43
Գիճութեան հետեւանքները	49
Դիշերային հոսումները	57
Պատանեկան կռովը	60
Խնչպէս պէտք է դարձանուիլ զիճութենէ	64
Վեներական կամ սեռային հիւանդութիւններ	69
Թրանկախտը	72
Զերմամիզութիւնը	78
Ծնողաց համար	83



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220036294

In 509

A ii  
36294

11443  
1.50

-:- ԴԻՆ 25 ՍՈՒՐԻԱԿԱՆ ԴՐԵ -:-